

17866

ՈՒՄ ԵՆՔ ԸՆՏՐԵԼՈՒ
ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

324(47)
ՈՒ-48

ԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ • 1937

324(47)

ՈՒ-48

27 SEP 2006

Պրոկտորներ բոլոր յերկրների, միացե՛ք

15 JAN 2010

ՈՒՄ ԵՆՔ ԸՆՏՐԵԼՈՒ
ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

ԲՈՆՎՈՐ-ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆՆԵՐԻ, ԱԿԱՆՎՈՐ ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՈՒ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՊԵՏՂՈՍ

1987

ՅԵՐԵՎԱՆ

27. AUG 2013

17866



1401
46

КОГО МЫ ВЫБЕРЕМ
В ВЕРХОВНЫЙ СОВЕТ СССР

Сборник статей рабочих-стахановцев,
знатных колхозников и работников науки

Госиздат, Ереван, 1937

Ս. Ի. ՅԱՇԻՆ — «Փարիզյան
Կոմունա» ֆաբրիկայի շքա-
նշանակիր - ստախանովա-
կան, Մոլոտովի անվան Ար-
գակադեմիայի ուսանող

ՄԵՆՔ—ՅԵՐԿՐԻ ՏԵՐԵՐԸ

Կար ժամանակ, յերբ մեր յերկրի մասին բանաստեղծները
տխուր վտանավորներ էյին հորինում: Պոետ Նեկրասովը գրում էր.

Դու է՛ աղքատ ես,
Դու է՛ առատ ես,
Դու է՛ հզոր ես,
Դու է՛ անուժ ես,
Մայր-Ռուսիա:

Ռուսաստանն առատ էր իր բնության հարստություններով,
և միևնույն ժամանակ՝ աղքատ, անուժ, վորովհետև նրա աշխա-
տավորներն իրավազուրկ էյին, ձեռքով, ապրում էյին ազդեալ-
թյան ու չքավորության մեջ:

Բանվորներն ու գյուղացիներն իրենց յերկրի տերերը չե-
յին: Անընդգրկելի հողերը, իրենց մեջ անսպառ հարստություն-
ներ պարունակող ընդերքը, անանցանելի անտառները, հզոր զե-
տերը, ձկներով հարուստ ջրային ավազանները, ֆաբրիկաներն
ու գործարանները—այս ամենը մի փոքրիկ կույտ պարազիտնե-
րի—կապիտալիստների ու կալվածատերերի սեփականությունն
էր: Աշխատավոր ժողովուրդը վոչ միայն չէր կարող զեկավարել
պետությունը, նա քաղաքականության մասին նույնիսկ խոսել
չէր համարձակվում: Նրան ավել էյին միմիայն մի իրավունք.
յերեսի քրտինքով աշխատել տիրոջ համար կապիտալներ հայ-

Թայթեղ և իր կիսաքաղց գոյությունը քարշ տալ: Այն ամենը ինչ վոր յերկրում ստեղծվում էր բանվորների ու գյուղացիների միլիոնավոր ձեռքերով, գնում էր գիշատիչ ինքնակալության ու բուրժուազիայի գրպանները:

Իշխանությունը նրանց ձեռքին էր: Նրանք հոգում էին միմիայն իրենց մասին, իրենց սեփականության պահպանման մասին, իրենց բարորության մասին, կապիտալներ էյին կուտակում, իսկ ժողովուրդն աղքատանում էր: Նա հայրենիք չունեց, վոչինչ չունեց պաշտպանելու: Իրա համար էլ հենց հարվածում էյին մայր-Տիուխային ամենքը, ում սիրտն ուզում էր, հարվածում էյին, ինչպես ասել է ընկեր Ստալինը, ուղիական հետաձայնության համար, կուլտուրական հետաձայնության համար, պետական, արդյունաբերական ու գյուղատնտեսական հետաձայնության համար:

20 տարի յե անցել այն ժամանակից, յերբ Լենինի-Ստալինի կուսակցության ղեկավարությամբ բանվոր դասակարգն ու աշխատավոր գյուղացիները տապալեցին պարազիտների այդ իշխանությունը (անիծվի նա): Վոչնչացրին միանգամ ընդմիշտ: Յեվ այժմ չկա այնպիսի ուժ, վորը կարողանա հարվածել մեր մեծ, ամենազոր յերկրին:

Խորհրդային Միությունը—հզոր ինդուստրիալ պետություն է: Յուրաքանչյուր Ֆարրիկա—մերն է, յուրաքանչյուր գործարան, յուրաքանչյուր խորհրդանտեսություն—մերն են: Կոլտնտեսությունների հարստությունները—գյուղացիների համայնական սեփականությունն են: Բոլոր հողերը, անտառները պատկանում են ամբողջ ժողովրդին: Այդ պատճառով էլ ԽՍՀՄ—բանվորների ու գյուղացիների պետությունը—սոցիալիզմի անսոփի ամբողջն է:

Խորհրդային յերկիրն անձանաչելի յե դարձել թե տնտեսական է թե կուլտուրական տեսակետից: Մեր «Փարիզյան կոմունա» կոչկեղենի ֆարրիկան նույնպես խիստ փոխվել է:

Մինչև հեղափոխությունն այստեղ կար մի փոքրիկ մասնավոր խղճուկ գործարան: Պատերազմի տարիներին նա բաց էր թողնում ուղիամիջերք մարդկանց վոչնչացնելու համար: Իրեքր ցերեկ աշխատում էր մի քանի հարյուր մարդ, խեղդվելով աշ-

խատանքի անտանելի պայմաններից: Չկար վոչ ճաշարան, վոչ ախուժ, վոչ գարոց: Վոչ վոք հող չէր տանում բանվորների կյանքի ու կուլտուրայի մասին: Մինչդեռ լցվելով ուռչում էր գործարանատիրոջ գրպանը: Այգպիսի գործարանը բանվորն իրենքը համարել չէր կարող: Ինչ՞ու պիտի նա լավացներ արտադրանքը ու գեռ պաշտպաններ էլ այդ տաժանակիր բանալը: Գործարանում արտադրությունը կարգավորված չէր, աշխատանքն ընթանում էր մի կերպ. վատ էյին ապրում և բանվորները, քիչ էյին վաստակում:

Սակայն անա 1922 թվականին բուլշևիկներն այդ խղճուկ գործարանն սկսեցին վերածել կոչկեղենի սոցիալիստական ֆարրիկայի: Այն ժամանակ ֆարրիկայում աշխատում էր ընդամենը մոտ 300 մարդ, և որական բաց էր թողնվում հազար զույգ կոչկեղենից վոչ ավելի:

Սակայն տարեցատարի ֆարրիկան ընդարձակվում է, մեծացնում է իր արտադրանքը և այժմ նախկին կապիտալիստական ձեռնարկության հետքն անգամ չի մնացել: Խոշոր, գեղեցիկ ցեխեր՝ սարքավորված նոր տեխնիկայով: Ֆարրիկային կից—ճաշարան, ախուժ, ընթերցարան, ամբուլատորիա, կարմիր անկյուններ, մանկապարտեզներ: Այժմ «Փարիզյան կոմունան» որական բաց է թողնում 30 հազար զույգ կոչկեղեն:

Մեր ֆարրիկայում անել են նոր մարդիկ: Բաղձապատիկ անգամ լավացել է ֆարրիկայի բանվորների նյութական գրությունը, բարձրացել է նրանց կուլտուրական մակարդակը: Մենք սովորում ենք, մենք որեցոր աճում ենք:

Յես ֆարրիկա լեմ յեկել գյուղից, յիդել եմ սակավ գրագետ: քաղաքական հարցերին ծանոթ չեմ յեդեր: Ինձ սովորեցրել, դաստիարակել է կոմունիստական կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը: Յես սովորել եմ բուլշևիկներին մոտ, հին բանվորների մոտ ու դարձել եմ ստախանովական:

Այժմ յես սովորում եմ Մոլոտովի անվան Արդակազեմիայում, ինժեներ պիտի գառնամ:

Առաջ կարճ էր արդյոք այս մասին մտածել գյուղական ցերիտասարդը—հովիվը:

Մեր ֆարքիկայի հարյուրավոր բանվորներ ու բանվորուհիներ նույնպես սովորում են, ինչպես յես: Անա բանվորուհի ընկե-
Ցեգորովան: Նա մեծացել ու դաստիարակվել է ֆարքիկայում:
Այժմ նա կառավարութեան անդամ է: Մյուս բանվորուհի ընկե-
Տարմուխինան Մոսկովայի Խորհրդի անդամ է: Մեր բանվոր-
ներից աճել են պոետներ, գեղարվեստագետներ, գյուտարարներ...
Մեր գործարաններում դրանց թիվը հաղարներով, տասնյակ հա-
զարներով կարելի չէ հաշվել, շուտով դրանք միլիոններ կհաղմեն:

Մեր մեծ յերկրում, աշխարհում չտեսնված գործեր են կա-
տարվում: Յեվ դա բացատրվում է շատ պարզ կերպով, մենք
այժմ վնչ միայն բանվորներ ենք, այլև ֆարքիկաների ու գոր-
ծարանների տերեր, կոլանտեսականը վնչ թե պարզապես գյու-
ղացի յես, այլև իր հողի, իր կոլեկտիվ տնտեսութեան տերը, մենք
բոլորս աշխատավորներ ենք,—մեր յերկրի տերերը: Ի՞նչպես կա-
րող ենք մեք չսովորել, չաշխատել, չաճել: Մեր սոցիալիստական-
հայրենիքն այժմ է՝ առատ է, է՝ հզոր է, է՝ ամենայնըջանիկ
յերկիրն է:

Ստալինյան Սահմանադրութեանն էլ ավելի բարձրացրեց
մեզնից յուրաքանչյուրի նշանակութեանը՝ վորպես Խորհրդային
Միութեան քաղաքացու է տիրոջ:

Ժողովուրդն իշխանութեան գլուխ է կանգնած: Ժողովուրդն
ունի աշխարհումս վոչ միայն ամենագեմոկրատիկ սահմանադրու-
թեանը, վորն ամբապնդում է Լենինի-Ստալինի կուսակցութեան
գեղավարութեամբ ընդմիշտ նվաճածն ու ձեռք բերածը, այլև
աշխարհումս ամենագեմոկրատիկ ընտրական որենքը: Այս որեն-
քը մեզնից յուրաքանչյուրին կապահովի յերկրի Գերագույն որ-
դանի համար ամենալավ է մեզ պետանի մարդիկ ընտրելու հնա-
րավորութեանը:

Շուտով լինելու յեն ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրու-
թեաններն ըստ նոր Ստալինյան Սահմանադրութեան:

Ո՞ւմ պիտի յես ձայն տամ:

—Յես իմ հայրենիքի պատրիոտն եմ, ուստի է ձայնս կտամ
ամենից առաջ նրանց, ովքեր բանվորներին ու գյուղացիներին
սովորեցրել են, կազմակերպել է ոգնել վոչնչացնելու պարագիտ-

ներին—ցարին, կալվածատերերին ու կապիտալիստներին, ով-
քեր գեղավարել են սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում: Յես
կոչ եմ անում ձայնը տալ բոլշեվիկներին, վորոնց գեղավարու-
թեամբ մենք սոցիալիզմ ենք կառուցել: Բոլշեվիկյան կուսակ-
ցութեանը յեղել է է միշտ էլ կլինի մեր պետութեան գեղավար
միջուկը: Լենինի-Ստալինի կուսակցութեանը մեր ամբողջ Ժողո-
վրդի համար կապահովի հետագա տնտեսական, կուլտուրական է
քաղաքական աճում, հետագա հաջողութեաններ կոմունիզմի կա-
ռուցման գործում:

Յես կոչ եմ անում Խորհրդային Միութեան բոլոր քաղաքա-
ցիներին—յեղեք յերկրի իսկական տերեր, ԽՍՀՄ Գերագույն
Խորհրդի ընտրութեանները կատարեցեք լրջմտորեն: Ընտրեցեք
միմիայն այնպիսի մարդկանց, վորոնք իրենց ցուցաբերել են
վորպես աննկուն մարտիկներ ընդդեմ կուսակցութեան ու Ժողո-
վրդի բոլոր թշնամիների—ստոր դավաճանների, մատնիչների,
լրտեսների: Ընտրեցեք նրանց, ովքեր գործով ցույց են տվել,
վոր իրենց կյանքը նրանք կտան հանուն բոլշեվիկյան կուսակ-
ցութեան շարքերի միասնութեան, հանուն Ժողովրդի գործի, հա-
նուն կոմունիստական հասարակութեան կառուցման:

Ն. Գ. ՏՐՈՒՍՈՎ — Կերովի
անվան (նախկին Դինամո)
գործարանի ստախանովա-
կան:

ԱՌԱՋ ՅԵՎ ԱՅԺՄ

Յես հիշում եմ, թե ինչպես եյին կատարում Սահմանադիր
ժողովի ընտրութիւնները 1918 թվականին:

Բուրժուազիան և իր գործակիցները—մենշեվիկներն ու
եսերները—ձգտում եյին Սահմանադիր ժողով քաշ տալ իրենց
պատգամավորներին: Իրենց կազմակերպած միտինգներում նրանք
ամեն կերպ աշխատում եյին մթազնել բանվորների ու գյուղա-
ցիների գլուխները: Նրանց խնդիրն էր—Սահմանադիր ժողովը
դարձնել բոլոր հակահեղափոխական ուժերի կենտրոն:

Բոլշեվիկները Սահմանադիր ժողովին դեմ եյին, սակայն
թուլյատրում եյին նրա գումարումը, վորպեսզի բուրժուազիա-
յից պահանջեն դադարեցնել պատերազմը, կալվածատիրական
հողը հանձնել գյուղացիներին և այլն: Բանվորներն ու գյուղ-
ացիներն իրենց սեփական փորձով պիտի համոզվեյին, վոր Սահ-
մանադիր ժողովը չի լուծի այդ հարցերը և վոր նա հեղափոխու-
թյանը դեմ կլինի: Ամբողջ իշխանութիւնը պետք է անցներ
Բանվորական, գյուղացիական ու զինվորական պատգամավորնե-
րի Խորհուրդներին:

Յուրաքանչյուր կուսակցութիւն ուներ թեկնածուների իր
ցուցակը: Յուցակներն ունեյին համարներ, 1-ին, 2-րդ, 3-րդ,
4-րդ և 5-րդ: Բոլշեվիկների ցուցակը № 5-ն էր:

Մեզնում, Մոսկվայում, այն ժամանակվա Սիմոնովսկայա

սրբողայում, միտինգները տեղի եյին ունենում Լիպկիում: Հան-
դես եյին գալիս ազիտատորներ բոլոր կուսակցութիւններէց:
Բանվորների միջավայրում մեծ հեղինակությամբ եյին ոգտվում
բոլշեվիկները: Մեր բանվորների մեծամասնութիւնը ձայն տվեց
№ 5 ցուցակին—բոլշեվիկներին, վորովհետև բոլշեվիկները կողմ-
նակից եյին պատերազմը վերջացնելուն, ֆարբիկաներն ու գոր-
ծարանները բանվորներին հանձնելուն, իսկ հողը—գյուղացինե-
րին, ութթամյա աշխատանքային որվան: Իսկ կազետները, մեն-
շեվիկներն ու էսերներն աշխատում եյին մեզ համոզել, վոր պա-
տերազմը պետք է հասցնել իր հաղթական վախճանին: Իսկ կովել
մեզնից արդեն վոչ վոք չեր ցանկանում...

Գիտերի բանվորները, զինվորներն ու նավաստիները ցրե-
ցին Սահմանադիր ժողովը—կարծես փչեցին թուցրին այն: Սա-
կայն հակահեղափոխական պիղծ վոզին ինտերվենտների ոգնու-
թյամբ արդեն հարձակման էր անցել մեր յերիտասարդ հանրա-
թյամբ պետութեան վրա: Խորհուրդները կազմակերպեցին մեզ—բան-
վորներին ու գյուղացիներին—կովելու սպիտակ-գվարդիականնե-
րի դեմ, և հեղափոխութիւնը հաղթեց:

Դա սրանից 20 տարի առաջ էր: Նրանից մինչև այժմ ան-
ցած ժամանակամիջոցում մենք կառուցել ենք սոցիալիզմը—կո-
մունիզմի առաջին փուլը: Մեր խոշորագույն նվաճումները գրանց-
ված են Ստալինյան Սահմանադրութեան մեջ: Ստալինյան
Սահմանադրութեան հիման վրա մեզնում իրականացված է ընդ-
հանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքը՝ զաղտնի
քվեարկութեամբ: Մոտենում են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտ-
րութիւնները, վոր մենք պիտի կատարենք ընտրական նոր օրեն-
քի համաձայն:

Սրդեն վաղուց մեզնում չկան կալվածատիրեր, ֆարբիկա-
տերեր, վաճառականներ, չկան նաև կուլակներ: Մեզնում չկան
իրար թշնամի դասակարգեր: Դրա համար էլ հինց մեզնում կու-
սակցութիւնը մեկն է—բոլշեվիկների կուսակցութիւնը, Լենինի-
Ստալինի կուսակցութիւնը: Սակայն ընտրական պայքարն այժմ
եւ անխուսափելի յի: Դասակարգային թշնամու չջախջախված
մնացորդները փորձ կանեն թեկուզ վորևէ կերպ ազդել ընտրու-

թյունների վրա: Կշարժվեն յեկեղեցականները, աղանդավորները: Մեր ամենքիս, պիտակից բանվորներես, խնդիրն է՝ թույլ չտալ, վորպեսզի աշխատավորների պատգամավորների Սորհուրդներին մեջ սողոսկին ժողովրդի թշնամիները, խորհրդային իշխանության ու սոցիալիզմի թշնամիները: Մենք կընտրենք մեր գործին ամենից ավելի նվիրված մարդկանց, ամենալավերից ամենալավերին:

Մի անգամ չե, վոր յես մասնակցել եմ Սորհուրդներին ընտրություններին: Միշտ ել ձայն եմ տվել մեր ձեռնարկության ամենալավ մարդկանց—կուսակցական ու անկուսակցական բուրձեվիկներին: Վերջին ընտրությունների ժամանակ, հիշում եմ, ձայն տվի մեր բանվոր ընկ. Միլայեվին, Մոսկվայի խորհրդի պատգամավորին: Ընկ. Միլայեվն ամուր ե կապված բանվորներին հետ: Բանվորները ճանաչում էին իրենց պատգամավորին ու հաճախ էին գիմուժ նրա ոգնությանը: Աշխատանքի պաշտպանություն, ավելի վորակավորված աշխատանքի անցնել, ոգնություն բազմանգամ ընտանիքավորներին— ահա այս բոլոր հարցերով գնում էին Միլայեվի մոտ:

Բանվորները հարգում են Միլայեվին նրա բուրձեվիկյան համառության, հաստատակամության համար, նրա ձեռներեցության համար, աշխատանքը ծավալել կարողանալու համար:

Սորհրդի պատգամավորության թեկնածուն պետք է բոլոր ընտրողներին լավ հայտնի մարդ լինի և ամեն կողմից ստուգված:

Բյուրոկրատ չէ՞ արդյոք նա, ու՞մ վոր մենք նշում ենք վորպես պատգամավոր: Մեծամիտ չէ՞ արդյոք: Կարող է արդյոք նա ճանաչել յերկերեսանուն, ինչ գեմակի տակ ել վոր վերջինս թաղնված լինի:

Սոցիալիզմի համար ամենալավ մարտնչողը միայն, ամենալավ արտադրանք տվողը միայն կարող է պատգամավոր լինել: Բանվոր դասակարգի գործին անսահմանորեն նվիրվածը միայն կարող է ընտրվել Սորհրդի պատգամավոր:

Պատգամավորը պետք է առի ժողովրդի թշնամիներին, ինչպես վոր մենք ամենքս, ագնիվ բանվորներս ենք առում նրանց, անխնա կովի նրանց դեմ և վոչնչացնի նրանց:

Մեր պատգամավորը նա յե, ով արյունակցորեն կապված է մասսաների հետ: Նա պետք է իմանա մասսաների պահանջները և արագորեն արձագանքի նրանց: Մեր պատգամավորը պետք է կարողանա կազմակերպել մասսաներին բուրձեվիկյան կուսակցության ու խորհրդային իշխանության շուրջը և առաջնորդի նրանց հետագա պայքարի հանուն կոմունիզմի:

Պատգամավորը պետք է սովորի, վորպեսզի կարողանա քաղաքականապես և կուլտուրապես աճել: Պատգամավորը պետք է հիշի ընկեր Ստալինի խոսքերը, թե հարկավոր չե տարվել միմիայն տնտեսությամբ, թե պետք է համառորեն տիրապետել բուրձեվիզմին: Առանց քաղաքական աշխատանքի, տնտեսական հաջողությունները կարող են ավազի վրա կառուցված դուրս գալ:

Այսպիսին պետք է լինի ժողովրդի կողմից իշխանության որդանի մեջ ընտրված պատգամավորը:

Մեր ամբողջ յերկիրը, մեր ամբողջ կյանքն անձանաչելի յե դարձել: Առաջվանից միանգամայն այլ կերպ են ապրում մեզնում բանվորներն ու կուլտնտեսային գյուղացիությունը: Ուրախ, յերջանիկ, ունևոր կյանքը— դա ստալինյան հնդամյակների հաղթության, սոցիալիզմի հաղթության արդյունքն է: Մենք մոտենում ենք յերրորդ հնդամյակին: Ամենալավերից ամենալավերին պետք է ընտրել Սորհուրդների մեջ, այնպիսիներին, ովքեր արժանապատվությամբ կկրեն Սոցիալիստական յերկրի աշխատավորների պատգամավորի կոչումը և յեռանդալին կպայքարեն կոմունիզմի հետագա հաղթանակի համար:

Լ. Ի. ԻՌՆՈՎ.—Կիրովի ան-
վան (նախկին Գրինամո)
գործարանի բանվոր:

ՆՎԱՃԱԾՆ ՈՒ ՁԵՌՔ ԲԵՐԱԾԸ ՎՈՉ ՎՈՔԻ ՀԵՏ ՁԵՆՔ ՏԱ

Հին ժամանակ, յերբեմն, գնում էյիր գաշտերով և տեսնում
էյիր ուժից ընկած ու նեղ հողաշերտեր, իսկ նրանց միջև՝ բարձր
սահմանագծեր՝ մորխոտով պատած: Դա գյուղացիական հողն
էր: Ամբողջ լավ հողը, մարգագետիններն ու անասունները կալվա-
ծատերերի, վանքերի ու ցարական գանձարանի ձեռքին էր:

Գյուղացին իր հողաշերտերը մշակում էր փայտյա արորով:
Գնում էր հողաշերտը, սկսում վարել: Արորը մի տեղ խորն էր
վերցնում, մի տեղ սաղը, իսկ տեղ էլ կար, վոր ամենևին չէր
վերցնում: Փայտյա տափանով էլ հողը լավ չես մշակի: Յե՛վ անա
տանջվում էյինք:

Մեր հարեանությամբ ապրում էր ազա Կովալյովը. նա ին-
քը նաև գեմասովոյի պետն էր: Գյուղացիները շրջապատված էյին
նրա հողերի ողակով: Անասունը գյուղից դեռ հազիվ դուրս հանած,
մեկ էլ տեսնում էյիր, վոր կովը կամ վոջխարն ընկել են նրա
արոտը: Յե՛վ կարծես սունկի նման, գետնից բուսնում էր ազայի
պահակն ու անասունը քշում կալվածատիրոջ բակը: Անիծվածը
վոչ մի կերպ անասունն առանց փողի հետ չէր տա, իսկ գյուղա-
ցին փրկագնելու համար փող չունեի, նշանակում է, պիտի ստի-
պեյին կալվածատիրոջ համար աշխատավճարել... Յե՛վ անա ամ-
բողջ կյանքներս այսպես աշխատավճարում էյինք...

Գյուղացին հոլի նման պտտվում էր: Փայտ չկա— խոհար-
հիր ազայի առջև: Հաց, խոտհարք չկա— վերցրու գլխարկդ ազա-
յի առջև՝ նրա մոտ քո իսկ ծառայագրման համար:

Պատահում էր, ազայի պահակը ձին հեծած գալիս էր, հրա-
մանը տանուտերի աչքն էր կոխում: Տանուտերը հավաքում էր
մուժիկներին ու կարդում:

«Այնքան լիցիլի գյուղի տանուտերին խոտիվ հրամայում եմ.
ամբողջ հասարակությամբ ներկայանալ՝ մշակելու ազայի հողը և
հնձելու խոտը: Չներկայանալու դեպքում հանցավորները պատաս-
խանատվության կենթարկվեն»: Վոլոստի պետը կարդում էր,
իսկ մուժիկներն աղմկում էյին.

— Աստված չանի, յեթե ազան զայրանա...

— Նրանց իշխանությունն է, դատարաններն իսկույն կդա-
տապարտեն, որենքներն էլ նրանցն են:

Հրամանը քննության առնելու ժամանակ չկա և չի էլ թույ-
լատրված: Գյուղացիները ձիերը լծում են, ուղևորվում են հնձե-
լու ազայական դեյսատինները: Հենց նոր էս հնձել վերջացրել,
յեկել էս տուն, վորպեսդի քո աշխատանքին ձեռք դարկես, այս-
տեղ նորից փորձանք, նորից ազայի մոտեն քշում հաճարը քա-
ղելու: Գյուղը նորից ձգվեց դեպի ազայի դեսյատինները՝ աշխա-
տավճարելու իր պարտքերը:

Ահա այսպես ամբողջ ամառն աշխատում էյինք աղաների
համար: Չքավորությունն ու կարիքն ստիպում էյին աշխատել
ազայի կամ կուլակի համար:

Չքավորությունը թողնում էր իր հարազատ վայրերը և հե-
ռանում ով վորտեղ պատահում էր՝ աշխատանք վորոնելու, կի-
սազին ծախում էր հողն ու անտեսությունը:

Կարիքից ստիպված՝ հայրս ինձ 14 տարեկան հասակումս
ուղարկեց Մոսկվա: Մենք՝ դեռահասներս որական աշխատում
էյինք 14 ժամ 30 կոպեկով: Ապրուստը մեզնից էր: Ապրում
էյինք կիսաքաղց: Իսկ աշխատանքը, վոր մենք կատարում էյինք,
դժվար էր, ուժից վեր: Ամեն վոք մեկ հրում էր՝ ինչպես շնիկ-
ների: Գնում էյինք այստեղ այնտեղ թափթիված՝ ինչպես խոճ-
կորներ: Դեռահասներից վոչ վոք չէր կարող իր ծնողներին նա-
մակ դրել քաղաքի կյանքի մասին և իր քաշած նեղության մա-
սին, վախենում էյին, թե տեղը կիմանա: Ասենք՝ մեզնից շատ
քչերն էյին գրագետ:

Այսպես եյինք ապրում մենք—թե բանվորները, թե գյուղացիները—չահագործողների ճնշման տակ, և թվում էր, վոր մեր կյանքում մի պայծառ որ չպետք և տեսնենք: Փառքիկատերերն ու կալվածատերերը իշխանութունն իրենց ձեռքն էյին առել, ժողովուրդը ձայն չունէր: Մի փոքրիկ բան էր պատահում թե չէ—եւ ավելի ամուր էյին սեղմում:

Մակայն մեղնից վոմանք արդեն հասկանում էյին, վոր բանվորները կազմակերպված ձևով պայքարում են արյուն ծծողների գեմ և իրենց հետեից պայքարի յեն տանում գյուղացիներին:

1905 թվականին պայթեց հեղափոխութունը: Ցարը վախեցավ և ցույց տարով, թե իբր ցանկանում է լսել ժողովրդի ձայնը, մինիստրների հետ միասին հնարեց Պետական դուման:

1906 թվականին յես դեռևս գյուղում էյի ապրում: Հիշում եմ, վորոտի պետը գյուղացիներին ժողովի հավաքեց: Յեկավ գեմսավոյի պետ Խրապովիցիին և ասաց. «Ընտրեցեք Պետական դումայի թեկնածուներ»:

Աղմուկ բարձրացավ: Սկսեցին անուռներ և ազգանուններ տալ: Ո՞ւմ ընտրել, ինչի՞ համար ընտրել, վոչինչ չենք հասկանում, վոչինչ չգիտենք:

Զեմսավոյի պետը վորոտի պետի հետ միասին մի քիչ սպասեցին, իսկ հետո՝ մութիկների վրա գոռացին, վոր լռեն: Լռութուն տրեց: Առաջ յեկավ գրագիրը՝ թեկնածուների պատրաստի ցուցակը ձեռքին ու սկսեց կարդալ: Բանից դուրս յեկավ, վոր զեմսավոյի պետը վորոտի պետի հետ միասին իրենք արդեն նշել էյին թեկնածուներին: Ցուցակի մեջ մտնում էյին հարուստ գյուղացիները—կուլակները: Ժողովը մի փոքր աղմկեց ու հաստատեց ցուցակը: Հետո խելքի յեկան և սկսեցին զեմսավոյի պետին խնդրել, վորպեսզի ընտրվածները յերգվեն և խոստանան Դումայում աղնվաբար պաշտպանել չքավորությանը: Զեմսավոյի պետը բարեհաճեց ուղարկել քահանայի հետեից: Յեկեղեցու պահապանը զանգերը տվեց: Յեկան տերտերն ու սարկավազը ախրացուի հետ: Ամենքը գնացին յեկեղեցի:

Սկսվեց ժամերգութունը: Մութիկները յեռանդով խաչակրն-

քում էյին, հույս էյին դնում Դումայի վրա: Գուցե Դումայով ապրելն ավելի հեշտ կլինի: Մի քիչ հող կտան կամ թե հարկերը կթեթևացնեն...

Մաղթանքը վերջացավ: Տերտերը խաչն ու ավետարանը դուրս բերեց: Դումա ընտրվածներից յուրաքանչյուրը խաչի ու ավետարանի առջև յերգվեց պաշտպանել գյուղացիական չքավորությանը: Մութիկները խաչակնքում էյին և վախենում էյին հավատալ...

Այդպես եւ յեղավ: Ընտրութուններն ուղղակի չէյին, ինչպես այժմ, այլ բազմաստիճան, զանազան սահմանափակումներով ու ձևականութուններով: Մեր թեկնածուներից վոչ մեկը վորպես պատգամավոր Դումա չընկավ: Մեր նահանգից կալվածատերերը, կուլակներն ու տերտերներն ընտրեցին մի ինչ վոր կալվածատիրոջ:

Այս ամենն անցավ վորպես յերազ: Ժողովուրդը վոտքի յեկավ ընդդեմ ճնշողների և փետրվարյան բուրժուազեմոկրատական հեղափոխության ժամանակ տապալեց ցարին: Ցարին փոխարինելու յեկավ ժամանակավոր կառավարութունը: 1917 թվականին յես արդեն բանվոր էյի և մասնակցում էյի Մոսկվայի խորհրդի ընտրութուններին: Մենշևիկիկների ու հսերների բուրժուական կուսակցութուններն ուղում էյին մեր վզին փաթաթել իրենց պատգամավորներին: Նրանք շատ շագակրատեցին, և քիչ չէյին այնպիսի բանվորները, վորոնք դեռևս հավատում էյին նրանց: Իսկ պետք էր ընտրել այնպիսիներին, վորոնց մասին մենք գիտեյինք, վոր նրանք կպայքարեն բանվորական գործի համար և գյուղացիների համար:

Հիշում եմ, թե ինչպես այն ժամանակ գործարանատեր Քյաբուշինսկին սպասնում էր Շուովի վոսկրոս ձեռքով՝ խեղդելու մեզ:

Բայց վոչինչ, մենք չվախեցանք: Յես և իմ ընկերները ձայն տվինք բոլշևիկիկներին:

Ապա սկսվեցին Մահմանազիր ժողովի ընտրութունները, կրկին բորբոքվեց պայքարը: Առանձնապես ջանք էյին գործ գնում մենշևիկիկները: Ուղում էյին բանվորների առաջ սեպտեմբերի ընտրութուններին: Մակայն այդ նրանց չհաջողվեց:

Ուշրեղիկիան ցրեցին: Հաղթանակեցին Խորհուրդները: Յեզ
բնչ ենք տեսնում մենք այժմ: Ո՞ւր է կալվածատերը: Ո՞ւր է
զեմասովոյի պետը: Ո՞ւր են Փաբրիկատերերը: Նրանց հօտն ել չի
մնացել: Գործարանները, Փաբրիկաներն ու հողը մերն են: Իշխա-
նութունն ել մերն է:

Անիծյալ անցյալից մենք հեռու յինք դնացել: Սակայն
մենք, ծնրունիներս, լավ ենք հիշում այդ անցյալը և նրան թույլ
չենք տա վերադառնալ:

Արյունոտ Փաշխատներն ու նրանց լակեյները—տրոց-
կիստներն ու աչերը—հույսները չեն կարում վերագարձնելու մեզ
մոտ կալվածատերերին ու Փաբրիկատերերին: Այդ բանը չի լի-
նի: Ժողովրդի թշնամիները—տրոցկիստական-բուխարինյան ճա-
պոնա-գեղմանական լրտեսները, ֆասսարարներն ու ղեկերսանտ-
ները մեզ շատ ֆլաս են պատճառել: Մենք լիկվիդացիայի յինք
յանթարկում նրանց ստոր աշխատանքի հետեանքները: Մենք
նրանց բոլորին արմատահան ենք անում և վոչնչացնում: Յեր-
բեք չենք ների մենք այդ անիծյալ մարդասպաններին մեր Կի-
բովի մահը: Կիրովի անվան գործարանը կաճեցնի հազարավոր
կիրովյաններ, նրանք կավարտեն այն գործը, վորի համար ըն-
կեր Կիրովը տվեց իր արյունը: ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի հա-
մար ընտրենք Լենինի-Ստալինի կուսակցութեանն ամենահավա-
տարիմ, ամենավստահելի մարդկանց: Ե՛լ ավելի ամրապնդենք
մեր սոցիալիստական տնտեսութունը, ել ավելի վստահելի կեր-
պով փակենք մեր խորհրդային տան դռները, վորպեսզի այնտեղ
ներս չտողա Փաշխատական վոչ մի գարշելի արարած: Մարդու
սիրտն ու բախանում է, ղիտելով մեզնում ծաղկող նոր կյանքը:
Բիչ աշխատանք չի զրված ու քիչ արյուն չի թափված մեր յեր-
ջանկութեան համար: Անցյալն ընդմիշտ անցավ:

Մեր իշխանութունը, Ժողովրդի իշխանութունը, մեզնից
այլևս վոչ վոք չի իլի:

Մ. Ի. ՅԱՐԻԳԻՆԱ — ԽՍՀՄ
ԿԳԿ-ի անդամ, Կուբսկի
մարզի, Վերխնեյուբաժսկի
ռայոնի «Հեղափոխութեան
արշալույսը» կուլտեստու-
թեան նախագահ:

ԱՎԵԼԻ ՇԱՏ ԿԻՆ ԴԵՊԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Չեմ ուզում հիշել կանացի հին դառն վիճակը, իսկ հիշել
պետք է, վորպեսզի մեր յերիտասարգութունն ել ալիլի ամուր
կերպով սերի իր հայրենիքը և խորհրդային կյանքը:

Ինձ վաղ հասակից վիճակվեց ճաշակել վիշտը: Տասը տա-
րեկան հասակից յես իմ փոքրիկ յեղբոր հետ միասին կուլակնե-
րի մոտ դաշտում վոչխար եյի արածացնում, ապա դաշակութեան
մոտ տերտերի մոտ: Ինձ ևս հասակ չառած, ինձ տվին կալվա-
ծատեր Շատոխինին: Աշխատում եյի ծեղից ծեղ, գործում եյի,
զեզ եյի դնում, կալում եյի, իմոր եյի հունցում, գետն եյի
զնում՝ աղաների սպիտակեղենը լվալու:

Տարեկան ինձ վճարում եյին 30 ռուբլի, իսկ սրանից ել
առյուծի բաժինը տասնապետն եր խլում: Նրանից գանգատվեին
անողուտ եր... Այսպես անցավ իմ յերիտասարգ կյանքի 18 տա-
րին...

Ամուսնացա յես բատրակի հետ: Սևիական իրճիթ չունե-
լինք: Հետո գնեցինք անձխնելույղ մի հյուղակ, նեղ, կիսաբանդ
վիճակում: Յերեխաներ ունեցանք—գրութունը բոլորովին վա-
տացավ: Հացի յերես միշտ չե, վոր տեսնում եյինք: Ման եյինք
գալիս տրեխներով և ինքնագործ կոպիտ հագուստով:



Հիշում եմ, պետք է մարդու տայինք ամուսնու քույր Յեվդեհիային: Փող չունեյինք: Վերստում մեզ փոխ տվին 150 ուսուլի՝ յերեք տարում մաս-մաս վճարելու պայմանով, բայց տուկոսները մեծ էյին: Յերեք ամիս ել չեր անցել, վոր տանուտերը յեկավ և տուկոսները չվճարելու համար մեզնից տարավ վերջին մաքին:

Այսպես էյինք մենք ապրում: Իսկ տերտերները շշմեցնում էյին մեր գլուխը, յերկնքում զրախտ էյին խոստանում:

Պրոլետարական հեղափոխութունը ճորտութունից ազատագրեց կնոջը, տվեց նրան ազատութուն և իրավունքների լիակատար հավասարութուն: Խորհրդային կնոջ իրավահավասարության մասին հաստատուն կերպով զրված է Ստալինյան Սահմանագրության մեջ:

* *

Հեղափոխութունից հետո իմ կյանքն ել այլ կերպ ընթացավ:

Հիշում եմ, 1925 թվականին ինձ ընտրեցին գյուղխորհրդի անդամ: Յես ասրվեցի աշխատանքով և մյուս կանանց հետ միասին սկսեցի գյուղը վերափոխել նոր ձևի:

Յես անդրազետ էյի, նույնիսկ ստորագրել չգիտեյի, իսկ հետո սովորեցի, աշխատելն ավելի հեշտ դարձավ:

Աշխատելով գյուղխորհրդում, յես շատ բան արի, վորպեսզի մենատնտեսներին ներգրավեմ կոլտնտեսության մեջ: Ազիտացիայով համոզեցի մի քանի տասնյակ ընտանիքի: Կուլակներն ու տերտերներն ինձ ատում էյին, հաճախ էյին սպառնում ինձ սպանել, բայց յես չնահանջեցի:

1931 թվականին յես դարձա կոլտնտեսային բրիգադիր, հետո ինձ ընտրեցին շրջգործկոմի նախագահության անդամ:

Չորս տարի առաջ ինձ ընտրեցին կոլտնտեսության նախագահ: Վախենում էյի, կարծում էյի, թե գլուխ չեմ հանի: Ինձ կանչեցին քաղաքին: Ասում են. «Գնա, Մարֆա Իվանովնա, չէ վոր դու մեզնում կորեկտիվացման նախերգրիչն ես»: Սկզբում չէյի վստահում, բայց հետո համաձայնվեցի...

Մեր կոլտնտեսությունն այնպիսի բերքատվությունների յե հասել, վորպիսիները կարվածատերը յերազունն ել չեր տեսնում: Առաջին ստախանովական տարում մեր կոլտնտեսությունը հեկտարից 13 ցենտներ հարավային կանեփ հավաքեց:

Մեր գյուղն անճանաչելի յե դարձել: Այժմ այնտեղ կա ահուժ, բազիո, դաշտերում աշխատում են կոմբայններ: Իմ ձեռներեցությամբ շրջանում կառուցվում է Խորհուրդների տուն: Կա լավ հիվանդանոց:

1932 թվականին յես ընկեր Կալինինին մի նամակ գրեցի այն մասին, վորպեսզի մեր գյուղում կառուցվի կանեփահար գործարան: Կասուցեցին:

* *

1934 թվականին խորհուրդների շրջանային համագումարն էր: Ինձ ուղարկեցին այնտեղ: Շրջանային համագումարում ինձ ջոկեցին մարդայինի համար, այնուհետև խորհուրդների Համատուսական XVII և Համամիութենական VՊ համագումարի համար: Վերջինում ինձ ընտրեցին ԽՍՀՄ ԿԻԿ-ի անդամ:

Առաջ ասում էյին. «Կնկա ճամփին վառարանից մինչև շեմքն ե»: Ավելի հեռու մեզ չեյին ել թողնում: Յես նույնիսկ իմ գավառական քաղաքն ել չեյի տեսել, ուր մնաց Մոսկվան:

Յես շատ էյի հուզվում, յերբ առաջին անգամ մտա Կրեմլի պալատը: Ուզում էյի շուտ տեսնել հարազատ Ստալինին: Չէ վոր յես նրա հետ միասին պիտի վճռեմ պետական մեծ հարցեր: Յե՛վ տեսա յես տեսա Ստալինին: Մա մի մեծ, անմոռանալի յերջանկություն է իմ կյանքում: Համագումարում յես մասնակցեցի մեր մեծ պետության գործերը վճռելուն: Մա ինձ պետական աշխատանքի հսկա, պետական փորձ տվեց: Այժմ յես աշխատում եմ ավելի վստահորեն. յես գիտեմ, թե ինչ և ինչպես պիտի անեմ: Աշխատում եմ ինքս, խորհրդային աշխատանքի յեմ առաջ քաշում լավագույն կանանց, ահաբավ և կուսակցությանն ու կառավարությանը նվիրված մարդկանց: Յես իմ որինակով զգում եմ, վոր մեր յերկրում պետական աշխատանքին կարող է մասնակցել յուրաքանչյուր ազնիվ մարդ: Միայն թե սովորիք մեր լինինյան-

ստալինյան կուսակցութիւնը, մի կտրվի մասսաներից: Քեզ կողմն են, դու շատ բան կանես:

Ստալինյան Սահմանադրութիւնը խորհրդային յերկրի յուրաքանչյուր քաղաքացու վրա մեծ պարտականութիւններ է դնում: Յետ ամեն բան անում եմ, ինչ վոր կարող եմ, վորպեսզի կառուցեմ նոր, լուսավոր և ուրախ կյանք, և տեսնում եմ, վոր իմ աշխատանքը չի կորչում:

* *

Մոտենում են մեծ որերը: Իմ յերկիրը և յես նրա հետ միասին կընտրենք ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի անդամներ: Ո՞ւմ ընտրել: Բանը պարզ է. ձայն կտանք մեզ հայտնի մարդկանց, վորոնք փորձարկված են ժողովրդի թշնամիներէ դեմ, խորհրդային իշխանութեան թշնամիներէ դեմ մղված պայքարում, վորոնք արատավորված չեն, ազնիվ են և նվիրված են սոցիալիզմի գործին:

Այդպիսի մարդիկ մեզնում շատ կան: Չորս կողմը կյանքը յետում է ու շառաչում: Կաճեն նոր մարդիկ, նոր պահանջներով, զեղեցիկ, յերջանիկ կյանքի ակտիվ ստեղծողներ:

Ուզում եմ բոլորին հիշեցնել ընկեր Ստալինի ցուցումն այն մասին, թե կի՛նը մեծ ուժ է, կանանց պետք է ավելի համարձակորեն առաջ քաշել զեկավար աշխատանքի, ներգրավել պետութեան կառավարման մեջ:

Մեր յերջանիկ յերկրում հազարավոր ու հազարավոր աշխատավորուհիներ և կոլտնտեսուհիներ միանգամայն հասունացել են այդ աշխատանքի համար, կոլեկտիվ գյուղատնտեսութեան և մեր սոցիալիստական արդյունաբերութեան կառուցման մեջ հայտարերել են կազմակերպչական մեծ ընդունակութիւններ: Ընտրութիւնների ժամանակ այս բանը պետք էլինի հաշվի առնել: Կանայք ուժերի հսկայական աղբյուր են՝ բարելավելու համար աշխատավորների պատգամավորների Խորհուրդներէ աշխատանքը:

Արդյունաբերութեան ու սոցիալիստական դաշտերի ամենալավագույն ստախանովականներին ու ստախանովուհիներին, լավագույն կոմունիստներին ու կոմյերիտականներին, լավագույն

կանանց ու լավագույն յերիտասարգութեանը մենք կընտրենք: Գերագույն Խորհրդի մեջ:

Յեռանդուն, բանիմաց, մասսաների հետ ամուր կերպով կապված մարդիկ, այնպիսի մարդիկ, վորոնց համար մենք կարող ենք յերաշխովորել, թե նրանք կարգարացնեն մեր վստահութիւնը, ազնվորեն ու հմտորեն կտանեն մեր սոցիալիստական պետութեան գործերը, — ահա թե ում կառաջադրենք մենք վորպես ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորութեան թեկնածու: Յե՛վ կրկին կասեմ. մեր կոմունիստական կուսակցութիւնն ու Խորհուրդները շատ կանանց են գաստիարակել, վորոնք գիտեն պայքարել հանուն ժողովրդի գործի ու հաղթանակի: Մեզնում՝ Խորհրդային Միութեան մեջ աճել են բազմաթիվ ականավոր կանայք, ժողովրդի թշնամիներէ դեմ մղված պայքարում կայուն, զգոն, յեռանդուն և մեր կյանքը հմտորեն կերտող կանայք: Պետք է նրանց առաջ քաշել:

ժական խոսող կինո, և ռադիոհանդուրդ ուրիշ շատ բան: Ուղղաձգվել: ջահելացել են փողոցները, ամենուրեք ելեկտրականութուն է վառվում... Շատ յերկար պետք է թվես այն ամենը, ինչ նոր բան է յերևացել մեր կոլտնտեսութեան մեջ:

Մենք կրթութեան իրավունք ենք ստացել: Միմիայն մեր գյուղում, Ստարայա Պորուբեժկայում, տասնյակներով տաղանդավոր մարդիկ են անել: Նրանցից շատերը դարձել են ինժեներներ, ագրոնոմներ, ոգաչուներ, շոֆերներ, տրակտորիստներ ու բժիշկներ: Ու աչքիդ առաջ կուտուրեական նոր ուժեր ել են աճում: Մեր գյուղում ցարի որով բնակչութեան 10 հազար հոգուն մեկ յեկեղեցական-ժխական դպրոց կար, վորտեղ գլխավոր ուսուցիչը տերտերն էր: Այժմ մենք ունենք տարրական դպրոց, միջնակարգ թերի և լրիվ միջնակարգ դպրոցներ: Մերազ փառավորվում է, յերբ նայում ես այն ամենին, ինչ մեզանում արված է ստալինյան հնգամյակների տարիներին:

* *

Մի անգամ—սրանից յոթ տարի առաջ եր—տեսնեմ, գյուղի բոլոր ծայրերից կոլտնտեսութեան բակը վազեց յերիտաստարդութունը, շտապում են ծերունիներն ու անգնջում յերեխաները:

—Այդ ո՛ւր, ի՛նչ է պատահել,—հարցրի, շտապով դուրս գալով խճիթից, և նույնպես վազեցի նրանց հետևից:

—Արտասահմանյան մեքենա յեն բերել... ամերիկական. ինքն է հնձում ու կարում:

Բակի մեջտեղը դրված եր մոխրագույն ներկված, ամերիկական արտասովոր մի մեքենա—«հոլտ» կոմբայնը: Հարյուրավոր մարդիկ շտապում էին մեքենայի մոտ, վորպեսզի դիտեն: Չարմացած շարժում էին գլուխները:

—Ա՛յ քեզ աժդահա:

Միքանիսը կոմբայնին անվստահութեամբ էին նայում:

—Մենք ի՛նչ զրա բանացնողն ենք... ամերիկացիները դիտակ մարդիկ են, իսկ մենք ինչ ենք վոր...

Մեքենան ինձ գուր յեկավ, այն ել այնպես, վոր ամբողջ գիշերը քնել չկարողացա: Ինձ հանգիստ չեր տալիս այն միտքը,

թե արդյոք ինչպես է նա շինված, այդ հրաշք-մեղեհան: Վոնց անեմ, վոր վրան աշխատեմ...

Հետևյալ որը գնացի շրջանային կենտրոն խնդրելու, վոր ինձ սովորեցնեն կոմբայնի վրա աշխատել...

Ամբողջ ձմեռը յես համառորեն ուսումնասիրում էյի կոմբայնը. ցերեկը քանդում-սարքում էյի մեխանիզմը, գիշերները դրժեր էյի կարգում նրա կառուցվածքի մասին:

Այսպես ինձ համար սկսվեց նոր կյանքը, մի կյանք, վոր կապված է մեքենաների հետ: Յես վատ չտիրապետեցի կոմբայն բանեցնելու վարպետութեանը և նույնիսկ զարմացրի ամերիկացի անխնիկին: 1931 թվականի սեզոնին կոմբայնով յես հնձեցի 280 հեկտար: Մեխանիկն ասաց, վոր իրենց մոտ՝ Ամերիկայում շատ քիչ մարդ է այդպիսի արտադրանք տալիս:

Իսկ ժամանակն անցնում էր: Խորհրդային ինդուստրիան կոմբայնների սեփական արտադրութուն գլուխ բերեց, և 1935 թվականին մեր ՄՏԿ-ն խորհրդային միքանի «ստալինեց» կոմբայն ստացավ: Դրանցից մեկն ինձ հասավ: Մինչ այդ յես լավ սովորեցի կոմբայն վարել, սակայն, ելի շարունակում էյի ուսումնասիրել այն: Յե՛վ ահա 1935 թվականի սեզոնին ռեկորդային արտադրանքի հասա—ավի 1005 հեկտար:

—Ա՛յ ինչ եմ ասել,—ասում էյին կոլտնտեսականները: —Ա՛յ քեզ մեքենա: Մի հատիկ էլ բաց չի թողնում:

Նայելով իմ հնձած ընդարձակ դաշտերին, յես հիշեցի ամերիկացուն: Ա՛յ, մի այստեղ գար, մտածում էյի յես: Մի տեսներ թե ինչպես է նախկին բատրակի ձեռքում աշխատում խորհրդային մեքենան:

Յերկրում արդեն ծնունդ եր առնում և աճում ստալանովյան շարժումը: Առաջին, 1936, ստալանովյան տարում յես իմ ընկերներ Վասիլի Վերբեցկու և Իվան Շեվցովի հետ յերկու «ստալինեցով» հնձում էյի որական 50—60 հեկտար, իսկ լավագույն որերին՝ 70—75 հեկտար:

Յերկրորդ ստալանովյան տարին մեզ նոր հաղթանակ բերեց. յերկու «ստալինեցով» յես 3154 հեկտարի արտադրանք տվի:

Դեռ 1935 թվականին յես ստացա Լենինի շքանշանը:

Հին ժամանակներում մենք, չքավոր բառրակներս, յերազուամ ել չեյինք տեսնի պետական աշխատանքին մասնակցեց իսկ մյժմ: Յես ինքս անա չոթ տարի անընդհատ մասնակցում եմ այդ աշխատանքին: Յես գյուղխորհրդի անդամ, շրջգործկոմի նախագահութեան անդամ և մարդգործկոմի անդամ եմ:

Մեր Ստարայա Պուտլեժկայի գյուղխորհուրդն ունի գյուղխորհրդի 20 անդամ: Գյուղխորհուրդն ունի բնակարանային-շինարարական, ճանապարհային, կուլտուր-լուսավորական և այլ սեկցիաներ: Գյուղխորհրդի անդամներն աշխատում են սեկցիաներից մեկում, վոր ընտրվում է նրանց գիտելիքների և հակումների համապատասխան: Մավալվելու և աճելու տեղ կա, իսկ աշխատանք՝ մինչև վիզը: Կառուցում ենք նոր կուլտուրական տներ, նոր դպրոցներ, հիվանդանոցներ: Արդեն հասունացել է կուլտուրատեսային տներին ու գյուղի հասարակական շինքերին ճարտարապետական ձևավորում տալու անհրաժեշտութեանը: Ասֆալտապատում ենք փողոցները, ճանապարհներ ենք զցում, կամուրջներ ենք կառուցում: Թափներս դնալով ավելի լայնանում է: Մեր գյուղական գործերի մասին սկսում ենք պետականորեն դատել և զրանցից բարձրանում ենք զեպի ել ավելի բարձր պետական գործեր:

Վերջին յերեք տարվա ընթացքում յես յերեք անգամ տեսնելով եմ կուսակցութեան ու կառավարութեան մեր ղեկավարների հետ: Տեսնվել եմ նաև ընկեր Ստալինի հետ: Յես խորհուրդների VIII Համամիութենական արտակարգ համագումարի պատգամավոր եյի: Մեր յերկրի ամենանշանավոր մարդկանց հետ միասին յես քննարկել ու հաստատել եմ Ստալինյան Սահմանադրութեանը: Մասնակցել եմ նաև խմբագրական հանձնաժողովին:

Յես շատ նամակներ եմ ստանում կոլտնտեսականներից, կոմբայնավարներից ու տրակտորիստներից: Նրանք հպարտանում են նրանով, վոր յերբեմն ծեծկված, անզրազեա չքավորը դարձել է յերկրում հարգված մի մարդ: Յես նրանց պատասխա-

նում եմ, վոր մեր յերկրում յուրաքանչյուր մարդ կարող է հասնել զրան, միայն թե աշխատիր ազնվորեն, սովորիր լավ աշխատել և ամեն բանից ավելի սիրիր քո սոցիալիստական հայրենիքը:

Մտանում են ընտրութեաններն ըստ Ստալինյան նոր Սահմանադրութեան: Առաջին անգամն է, վոր ամբողջ ժողովուրդն առևիջակաճորեն ընտրելու յե կենտրոնական բարձրագույն իշխանութեանը— ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը: Մեզանից յուրաքանչյուրի համար որենքով պահանջված է ազատ և առանց վորեք սահմանափակումների ընտրելու հնարավորութեանը: Գյուղացիների և բանվորների համար ելի վճարող հնարավոր է այդպիսի ազատութեան: Միմիայն ԽՍՀՄ-ում:

Գերագույն Խորհրդի պատգամավոր մենք կընտրենք նրանց, ով յերկիրը չքավորութեանից ու իրավազրկութեանից հանեց սոցիալիզմի լուսավոր ճանապարհը, ով մեզ հասցրեց կուլեկտիվացման հաղթանակին, գյուղին մեքենաներ տվեց և առաջվան ծեծկված, անզրազեա բառրակներին ու չքավորներին սովորեցրեց վարել այդ մեքենաները, ով մեզ սովորեցրեց բարձր բերքատվութեան ստանալ և գյուղացիութեանը հասցրեց ունևոր, կուլտուրական կյանքի կոլտնտեսութեաններում: Մենք ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորութեան թեկնածու այնպիսի մարդկանց կառաջադրենք, վորոնք ստորին աշխատանքի մեջ ցույց են տվել աշխատելու իրենց շնորհքը, ցույց են տվել իրենց ազնվութեանը, իրենց նվիրվածութեանը կուսակցութեանը, Խորհուրդներին: Շատերն աճել են տեղական աշխատանքում, իրենց ցույց են տվել իրրե նոր կյանքի տաղանդավոր ստեղծիչներ, նրանց հարկավոր է շարժել առաջ զեպի պետական ղեկը:

Կոլտնտեսականները, տրակտորիստները և կոմբայնավարները ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի համար կընտրեն ստալինյան կոմիսիայի մարդկանց, վորոնք անձնական բարձր հատկութեաններով են աչքի ընկնում, մարդկանց, վորոնք ամուր կերպով

կապված են մասսաների հետ, անչափ առում են ժողովրդի թշնամիներին, կարողանում են նրանց մերկացնել և անխնա կերպով վռնչաղներ Գերագույն Խորհրդի համար ընտրենք նրանց, ովքեր վոչ թե խոսքով, այլ գործով նվիրված են մեր սիրելի սոցիալիստական հայրենիքին և կոմունիզմի գործին:

Ակադ. Ա. Մ. ՏերՊիտո-
րեվ.—գիտության և տեխ-
նիկայի վաստակավոր գոր-
ծիչ:

ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐՆ ՈՒՄ ԿՈՒՂԱՐԿԵՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Սոցիալիստ-ուտոպիստները մի ժամանակ, յերազելով մարդկային հասարակությունը վերակառուցելու մասին, պետության կառավարման բարձրագույն որգաններն ուղարկելու նկատի եյին առնում ամենախմաստուն զիտնականներին ու փիլիսոփաներին, նրանց տալով որենագրական իշխանությունը լրիվ:

Կապիտալիզմի խիստ որենքները վճռական ուղղումներ մտցրին ուտոպիստական, անիրականանալի յերազանքների մեջ: Կապիտալիստական հասարակության մեջ իշխանությունը պատկանում է կապիտալիստներին տիրող գասակարգին: Նրանք իշխելու թողնում են նրանց միայն, ով նվիրված է նրանց, ով ծառայում է նրանց:

Մինչհեղափոխական Ռուսաստանի պրակտիկան, ուղածդ բուրժուական-կապիտալիստական հասարակության պրակտիկան բազմաթիվ որինակներ գիտե, յերբ թե իշխանության կենտրոնական որգաններում և թե ինքնավարության տեղական որգաններում մասնակցություն ունենում եյին ինտելիգենցիայի առանձին ներկայացուցիչներ: Բայց ինչ ներկայացուցիչներ եյին զրանք: Դրանցից վոմանք իրենք պատկանում եյին կապիտալիստների տիրող գասակարգին. ուրիշները կամ զրանց կողմից կաշտոված եյին, կամ կապիտալի անձնվեր սպասարկուներ եյին հանդիսանում:

Կապիտալիստների տիրող գասակարգից տարբեր մտածող

հրքային ինտելիգենցիային տված բարձր գնահատականը գիտութեան ու տեխնիկայի յուրաքանչյուր առանձին աշխատողի եւ ավելի պարտավորեցնում է իր բոլոր ուժն ու գիտելիքները տալու սոցիալիզմի գործին: Մեզանում չկա և չի կարող լինել «մաքուր» գիտութեան աշխատող, ով կփորձեր իր գիտական գործունեությունը տանել քաղաքականութունից և բանվոր դասակարգի ու բոլոր աշխատավորների շահերից կտրված:

ԽՍՀ Միութեան Գերագույն Խորհրդի և աշխատավորների պատգամավորների խորհուրդների առաջիկա ընտրություններին գիտութեան ու տեխնիկայի աշխատողներն ամենակենդանի մասնակցությունը կունենան: Բանվոր դասակարգի ու գյուղացիութեան լավագույն ներկայացուցիչներին—ֆաբրիկաների ու գործարանների ստախանովականների, տրանսպորտի կրելովոսականների ու սոցիալիստական դաշտերի հարվածայինների հետ մեկտեղ, մեր քաջարի բանվորագյուղացիական կարմիր բանակի հերոսների և մեր հայրենիքի տնտեսութեան ու պաշտպանութեան ամենատաղանդավոր ղեկավարների հետ մեկտեղ, խորհրդային միութեան հերոսների հետ մեկտեղ, գիտնականներն աշխատավորների խորհուրդները կուղարկեն իրենց լավագույն ներկայացուցիչներին:

Գիտական ճակատի մարտիկների բազմամարդ բանակից մենք կընտրենք նրանց, ովքեր իրենց ամենորյա գիտական աշխատանքով մեր յերկիրը հարստացրել են նոր մեծ նվաճումներով: Նրանց, ովքեր անսահմանորեն նվիրված են Լենինի—Ստալինի մեծ գործին, նրանց, ովքեր յերկու աշխարհների կապիտալիստականի և սոցիալիստականի մահառիթ պայքարի ահավոր օրերին, առանց մտածելու, իրենց ուժերը, գիտելիքները, ստեղծագործ նախաձեռնությունը, իսկ յեթե պահանջվի, նաև սեփական կյանքը տալիս են կոմունիզմի հաղթանակի համար: Այդ կլինեն վոչ թե դասակարգային պայքարից կտրված այն «իմաստուններն» ու «փիլիսոփաները», վորոնց մասին մտածում էյին սոցիալիստ-ուտոպիստները: Այդ կլինեն մարդկային հասարակության լուսավոր ապագայի համար ոհալ մարտնչողները: Մեր շարքերում հազարավոր այդպիսիները կան: Ակադեմիկոս Լիսեն-

կոն, վոր բնութեան գաղանիքներն է թափանցել, գյուղատնտեսական գիտությունը հարստացրել և նոր համաշխարհային գյուտերով, խորհուրդների ամբիոնից հանդես է գալիս իրրև պետական մեծ գործիչ: Ակադեմիկոս Շմիդտը, նվաճելով Արկտիկայի անառիկ սարածութունները, սոցիալիզմի վառ կարմիր դրոշմ հարստ ու վստահ տանելով հյուսիսի լեին, սառցաշունչ սարածութունները, միաժամանակ խորացնում է մաթեմատիկական և բնագիտական զբաղիւլիւնները: Ակադեմիկոս Բախը, հին, հեղափոխական ինտելիգենցիայի ներկայացուցիչը, իր փութեան գրությունը հավասարապես տալիս է քիմիական գիտությունների զարգացմանը և մեր յերկրի արգյունաբերութեան գործին: Ակադեմիկոս Կոմարովը, վերահասու լինելով կենսաբանական գիտութեան ներըութուններին, խորհրդային գիտութեանը տանում է առաջ դեպի նոր նվաճումներ, իր աշխատանքը և անձնական կյանքը կապելով յերկրի ընդհանուր կյանքին: Մեզանում աճում են գիտութեան հազարավոր տաղանդավոր աշխատողներ, վորոնք յելած են բանվորների ու գյուղացիների խորքերից: Նրանք իրենց հին սերնդի արժանավոր հերթափոխն են թե գիտական հիմնարկների լաբորատորիաներում, թե սոցիալիստական դաշտերում, թե մեր մեծ հայրենիքի պաշտպանունակութունն ամրացնելու գործում: Այդ յերիտասարդ անդուսպ ընձյուղները, վորոնց վիճակված է աճել ու սոցիալիստական գիտութեան ու տեխնիկայի մարտիկների հզոր շրկատներ դառնալ, նույնպես պետք է գրավեն պետություն կառավարելու: Իրանցից լավագույններին մեր Միութեան քաղաքացիները պետք է ուղարկեն աշխատավորների պատգամավորների Խորհուրդները:

Մեր յերկիրը, ինչպես աշխարհում վոչ մի յերկիր, սոցիալիստական շինարարութեան բոլոր տեղամասերում ունի հիանալի կադրեր, վորոնց Լենինի—Ստալինի կուսակցութունն է դաստիարակել Խորհուրդների ընտրությունների ժամանակ գիտութեան ու տեխնիկայի աշխատողները կկատարեն իրենց կադրերի մասնուրակրիտ զորատեսը: Մերկացնելով ու սլտակագերծ անելով բոլոր սուտ գիտնականներին ու ղիլտանաներին, պատուելով արոցկիստական-բուխարինյան հրոսակախմբի գարշիլի թափթփուկները

գիմակները, խորհրդային գիտնականները մեր մեծ Միության բոլոր աշխատավորների հետ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի և անգական Խորհուրդների համար կրնաորեն արժանավորներից արժանավորագույններին և նրանց կհանձնեն սոցիալիզմի յերկերը կառավարելու պատվավոր ու պատասխանատու մանդատը:

Ակադ. Ա. Ն. ՍԱՄՈՅԼՈՎԻՉ

ՄԵՆՔ ՈՒՄ ԿԸՆՏՐԵՆՔ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խորհրդային յուրաքանչյուր քաղաքացի և նույն թվում խորհրդային յուրաքանչյուր գիտնական, պատասխանելով «Մենք մեւ կրնաորենք խորհուրդների համար» հարցին, պետք է ամենից առաջ ղեկավարվի Ստալինյան Սահմանադրության 1X գլխի—Ընտրական սիստեմը—հիմնական դրույթներով, վորը մեր սոցիալիստական հայրենիքի քաղաքացիների համար ապահովում է, այնպիսի ամենալայն ծավալով, ինչպես աշխարհում վոչ մի տեղ, ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունք գաղտնի քվեարկությամբ, «...անկախ ռասայական ու ազգային պատկանելությունից, դավանանքից, կրթական ցենդից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեյությունից...»:

Ամբողջ յերկրագնդի վրա ամենադեմոկրատական սահմանադրության և ամենադեմոկրատական ընտրական իրավունքի հիման վրա խորհրդային քաղաքացին Խորհուրդների և մասնավորապես պետական իշխանության բարձրագույն որդանի—ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի պատգամավորներ ընտրելու բոլոր հնարավորություններն ունի: Խորհրդային քաղաքացին հնարավորություն ունի ընտրելու իսկապես ամենաարժանավոր քաղաքացիներին, վորոնք ամենից ավելի ոգտակար են սոցիալիստական շինարարության գործին: Յեւ այդ մեծ հնարավորությունները մենք պարտավոր ենք լիովին իրացնել, ինչպես այդ գահանջում են մեր մեծ, հարուստ, ուժեղ, յերջանիկ հայրենիքի քաղաքական, տնտեսական, կուլտուրական և պաշտպանական շահերը:

Սորհուրդները ընտրությունների ժամանակ մենք պետք է հաստատ գիտենանք ու հիշենք, վոր քստ մեր Մահմանադրության, աշխատավորների պատգամավորների Սորհուրդները «ԽՍՀՄ քաղաքական հիմքն են» (հոդ. 2), վոր «Ամբողջ իշխանությունը ԽՍՀՄ-ում պատկանում է քաղաքի և գյուղի աշխատավորներին՝ հանձինս աշխատավորների պատգամավորների Սորհուրդներին» (հոդ. 3) և վոր այդ պատճառով Սորհուրդները մեր ընտրյալները պետք է լինեն խորհրդային լավագույն քաղաքացիներից լավագույնները, լիովին ընդունակ՝ սոցիալիստական շինարարության գործը վստահ ու հմտորեն տանելու առաջ, դեպի կոմունիզմը:

Սորհրդային գիտնականը, ինչպես և խորհրդային յուրաքանչյուր քաղաքացի, պետք է Սորհուրդների համար ընտրի խորհրդային արժանավորագույն քաղաքացիները, կուսակցական և վոչ կուսակցական բոլորիկները, իրենց բոլորիկական համոզմունքներում կայուն ու աներեր քաղաքացիները, սոցիալիստական շինարարության զանազան ճակատների ամենաազնիվ ու ամենաակտիվ մարտիկները, Սորհրդային Միության հերոսները, արդյունաբերության ու դաշտերի ստախանովականների, տեխնիկայի, գիտության, արվեստի լավագույն ներկայացուցիչները—սոցիալիստական կուլտուրայի համար մարտնչողները:

Սորհրդային գիտնականը, պատասխանելով «Մենք ո՞ւմ էլ ընտրենք Սորհուրդների համար» հարցին, պետք է նաև ավելի կոնկրետ պատասխանի իր գիտական մասնագիտության և սոցիալիստական շինարարության այն մարզերի կապակցութամբ, վորոնց իր գիտական մասնագիտությունը կոչված է ծառայելու և ծառայում է:

Իմ գիտական մասնագիտությունն է՝ արևելագետ, խորհրդային ու անդրսահմանյան Արևելքի մի խումբ ժողովուրդները, այն է՝ թյուրքական ժողովուրդները լեզուների ու գրականության հետազոտող: Դա ամենասերտ կերպով կապված է մեր յերկրի կուլտուրական շինարարության պրակտիկայի հետ, խորհրդային միության յեղբայրական ժողովուրդների ձևով ազգային և բովանդակութամբ սոցիալիստական կուլտուրայի զարգացման հետ:

Վոչ միայն խորհրդային քաղաքացիներին, այլև անդրսահմանյան յերկրների քաղաքացիներին լավ հայտնի յե, վոր միմիայն ԽՍՀՄ-ում ինչպես հարկն է, իսկպես լուծված է ազգային հարցը: Ազգային հարցի կարգավորումը յերբեք չի հաջողվել և չեր կարող հաջողվել կապիտալիստական յերկրների կառավարություններին, անցյալում՝ ցարական Ռուսաստանին, Ավստրո-Հունգարիային, ներկայումս՝ Լեհաստանին, Գերմանիային, Ճապոնիային և ուրիշներին:

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության քանամյակին կուսակցությանը և ԽՍՀ Միության կառավարությանը հաջողվեց բացառիկ հաջողութամբ իրականացնել Լենինի—Ստալինի ազգային քաղաքականության հիման վրա, մեր մեծ սոցիալիստական հայրենիքի յեղբայրական ժողովուրդների վոչ միայն իրավական, այլև փաստական հավասարությունը: Յերրորդ հընդամյակի սկզբներին մեզ հիմնականում հաջողվեց վերացնել Միքրի ու Միջին Ասիայի մի շարք ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական հետամնացությունը: Այդ ժողովուրդների զարգացումը հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից առաջ գիտակցաբար կասեցնում եր ռուսաստանյան ցարիզմի դաժան, ամարդի դադութային քաղաքականությունը:

Ով Սորհրդային Միության մեջ ձամբորդություն է կատարում, նա գիտե, թե ինչպես հեքիաթանման մեծ են Միութենական հանրապետությունները թե տնտեսական և թե կուլտուրական նվաճումները, որինակ՝ այնպիսիները, ինչպես Թուրքմենիան է, Ուզբեկստանը, Ղազախստանը: Յարական այդ նախկին զաղութները, հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով, վորք չրին սոցիալիստական զարգացման լուսավոր ուղին, շրջանցելով կապիտալիստական ուղին: Գյուղատնտեսության կոլեկտիվացման ու մեքենավորման, վորոգման սխտեմի խիստ բարելավման հիման վրա նրանցում նորակերպ է զարգանում անասնապահությունը, ստեղծվում, ամրանում ու աճում է առաջ գոյություն չունեցած ֆարբիկա-գործարանային արդյունաբերությունը: Թուրքմենները, ուզբեկները, զազախները աշխատավոր մասսաները, կուլտնտեսականները և բանվորները հասել են առաջ իրենց

և իրենց նախնիքների չտեսած ունեւոր, յերջանիկ կյանքի: Այլ-
նոր, խորհրդային պայմաններում հաջողութեամբ վերացվում ե-
նաև նրանց յերբեմնի կուլտուրական հետաքննարկութեանը:

Միջնադարյան, կրօնի հետ կապված և դժվարութեամբ յու-
րացվող արարական գրքերի փոխարեն թուրքմենական, ուզբեկա-
կան, ղազախական և միջանի այլ ժողովուրդներ ընդունել են
նոր, ազգային գրութուն լատինականի հիման վրա: Առաջին-
բում գրեթե 100% - ի հասնող անգրագիտութեանը հաջողութեամբ
վերացվում է: Լայնորեն ու խիտ զարգացել է ազգային տարրա-
կան ու միջնակարգ դպրոցների ցանցը: Առաջ են յեկել և հաջո-
գութեամբ զարգանում են ազգային բուհերն ու բուհակները: Հան-
րապետութեանները բոլոր անկյունները թափանցել են ազգային
լրագրեր: Հասարակական-քաղաքական և գիտական-տեխնիկա-
կան տերմինոլոգիա յե մշակվում մայրենի լեզուներով՝ ոգտա-
գործելով միջազգային տերմինոլոգիան: Թուրքմեններենի, ուզ-
բեկերենի, ղազախերենի և ուրիշ ազգային լեզուները յեն թարգ-
մանվում մարքսիզմ-լենինիզմի կլասիկները: Փազկում է նոր-
ազգային գեղարվեստական գրականութեանը, մայրենի լե-
զուներով հրատարակվում են ուսսական, Միութեան ու-
րիշ ժողովուրդների և համաշխարհային գեղարվեստական գրա-
կանութեան յերկերի թարգմանութեանները: Մեծ հաջողութեամբ
զարգանում է ազգային թատրոնը, ազգային յերաժշտութեանը,
ազգային բալետը:

Աճում են զանազան մասնագիտութեանների ու վորակա-
վորումների ազգային տեխնիկները, տղամարդկանց ու կանանց
կազմերը, դուրս են յեկել ազգային գիտնականներ, բնա-
պատմական, մաթեմատիկական, հումանիտար գիտութեանների
մասնագետներ:

Թուրքմենիայում, Ուզբեկստանում, Ղազախստանում և ու-
րիշ ազգային հանրապետութեաններում խորհրդային ազգային
քաղաքականութեանն իրականացնելու բնագավառում այդ բո-
լոր խոշորագույն նվաճումներն արդյունք են խորհրդային էշխա-
նութեան հաղթանակների, վոր ձեռք են բերված գասակարդային
լարված պայքարում: Խորհրդային էշխանութեանն ու լայն հա-

սարակայնութեանը պայքարում են տեղական նացիոնալիզմի և
առասական մեծապետական շովինիզմի դեմ, պայքարում են ձեռով
ազգային և բովանդակութեամբ սոցիալիստական նոր կուլտուրա
կառուցելու համար Համկ(բ)ի և ժողովուրդների իմաստուն առաջ-
նորդ ընկեր Ստալինի ղեկավարութեամբ:

Լեզվային շինարարութեանը չափազանց խոշոր տեղ է գրա-
վում մի շարք հանրապետութեանների սոցիալիստական կուլ-
տուրայի շինարարութեան մեջ: Չնայած ձեռք բերված խոշորա-
գույն հաջողութեաններին, վոր արտահայտվել են մասնավորա-
պես մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխութեանը
ազգային գրեր չունեցած ժողովուրդների համար (կարա-կալպակ-
ներ, ղըրղըզներ, նողայցիներ և ուրիշն.) գրական նոր լե-
զուներ ստեղծելու, լեզվային շինարարութեանը շատ հետո յե
ավարտված լինելուց: Վորքան աճում են անտեսական ու կուլ-
տուրական հաջողութեանները, այնքան Խորհրդային Միութեան
յեղքայրական ժողովուրդները նոր և շարունակ բարձրացող պա-
հանջներ են ներկայացնում սոցիալիստական կուլտուրայի աշ-
խատողներին: Այդ պահանջները ճիշտ ու ժամանակին կատարե-
լու հսկողութեանը և նրանց կատարման ամեն կերպ ոժանդա-
կելը մանում են ամենից առաջ աշխատավորների այն պատգա-
մավորների պարտականութեանները յժի մեջ, վորոնք համա-
պատասխան թեորիական պատրաստութեան և պրակտիկ փորձ
ունեն, միացած քաղաքական ղգոնութեան հետ:

Ուստի, մտածելով ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի առաջիկա
ընտրութեանների մասին, յես, համապատասխան իմ մասնագի-
տութեանը, պետք է ընդգծեմ այն բանի անհրաժեշտութեանը,
վոր Խորհուրդների մեր ընտրյալների, սոցիալիստական կարգերի
ամբողջական ու զարգացման համար լավագույն պայքարողներից լա-
վագույնների թվում, ուրիշ շատ պրոֆեսիանների ու մասնագիտու-
թեանների ներկայացուցիչները կողքին լինեն նաև կուլտուրական
ճակատում, մասնավորապես Խորհրդային Արևելքի հանրապետու-
թեանների, յերկրների ու մարզերի կուլտուրական ճակատում
պայքարողները:

Խորհուրդների պատգամավորներին չեն կարող ամենալուրջ
կերպով չհետաքրքրել նաև յերրորդ հնգամյակի կուլտուրական

շինարարութեան ուրիշ խնդիրներ: Քաղաքական աչքի ընկնող նշանակութեան ունեցող նման հերթական վիթխարի ու ամենաբարդ կուրտուրական ձեռնարկումների թվին և վերաբերում, որինակ, ԽՍՀՄ Գիտութեան Սկզբնական հետազոտական ինստիտուտների և խորհրդային ուրիշ ակադեմիաների մասնակցութեամբ ԽՍՀՄ կապիտալ պատմութեանը և համաշխարհային կապիտալ պատմութեանն ել կաղմելու: Խորհրդային ընթերցողներ համար բաղմանատու պատմագրական աշխատութեան և պահանջում, վորն իր մեթոդոլոգիական գիրքավորումներով խարսխվի Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի ուսմունքի վրա:

Նման գիտական պատասխանատու ձեռնարկումները և ուրիշ նույնքան նշանավոր աշխատութեանները, որինակ՝ Միութեան յեղրայրական ժողովուրդների լեզուներով գեղարվեստական գրականութեան ասպարեզում, խորհրդային թատրոնի, յերաժշտութեան ասպարեզում և այլն, բնականաբար կարող են քննութեան նյութ գառնալ Խորհուրդներում ինչպես սկզբունքային—քաղաքական կողմից, նույնպես և նյութական ու բարոյակտն աջակցութեան ամենատեսակ յեղանակների տեսակետով:

Ի լրումն այս հովանում ասածի, մենք պետք է հայտարարենք, վոր խորհրդային արժանավորագույն քաղաքացիները, կուսակցական և վոչ կուսակցական բոլեիկները, վորոնք կուրտուրական, գիտական և անտեսական շինարարութեան զանազան բնագավառներում թերիական և պրակտիկ գիտելիքներ ունեն, պետք է ընտրվեն Խորհուրդների պատգամավոր՝ խորագես և բազմակողմանիորեն ծավալելու համար ըստ Ստալինյան Սահմանադրութեան ընտրվող Խորհուրդների զործունեյութեանը:

Թերևս արդյունաբերւթյան՝
Մոլոտովի անվան Սկզբնական
միայի ուսումնողներ՝
Մ. Ի. Վինոգրովսկու —
շքանշանակիր, Իվանովոյի
մարդի Նոգինի անվան
Ֆ-կայի ստախանովական.
Մ. Ն. Ֆոմինսկու — շքանշանակիր,
Լենինգրադի մարդի Չերժինսկու անվան Ֆ-կայի
ստախանովական.
Յն. Գ. Իվանովսկու —
Մոսկվայի մարդի Հոկտեմբերյան
հեղափոխութեան անվան Ֆ-կայի
ստախանովական:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿԱՐԳ ՈՒ ԴԻՍՅՊՈԼԻՆԱ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Մոտենում են ԽՍՀ Միութեան Գերագույն Խորհրդի ընտրութեանները: Ահագին ուրախութեան և, գրա հետ մեկտեղ, պատասխանատվութեան զգացմունք է համակում մեզ: Չե վոր մենք ինքներս, անմիջականորեն պետք է պատգամավորներ ընտրենք մեր որենադրական Գերագույն որդանի համար:

Մենք՝ ստախանովականներս ձայն կտանք նրանց, ովքեր մեզ ուրախ և յերջանիկ կյանքի յեն հասցրել, ովքեր մեզ հնարավորութեան տվին սովորելու, տեխնիկային տիրապետելու և մեր հայրենիքի յերեկելի մարդիկը գառնալու:

Մենք պետական կառավարման որդանների համար առաջ կքաշենք նրանց, ովքեր պայքարել են բանվոր գոտակարգի գոր-

ծի համար, մեր յերջանկութեան համար, ովքեր իրենց ուժերը չեն խնայում ժողովրդի համար, ովքեր մեզ սովորեցնում են հաղթել: և հաղթանակից դեպի հաղթանակ են տանում:

Մենք ձայն կտանք նրան, ով ժողովրդի թշնամիները դեմ մղվող պայքարում գործով ապացուցեց իր նվիրվածութունը բանվոր դասակարգին, Լենինի—Ստալինի կուսակցութեանը:

Ամեն մի ուր, ամեն մի ժամ մենք զգում ենք մեր կոմունիստական կուսակցութեան հոգատարութունը մարդկանց մասին և մեր կյանքի բարելավումը:

Ուրախ ե դարձել ապրելն աշխարհում, ուրախութունն և աշխատելն ու սովորելը: Ամենուրեք հորդում ու յետում և ժողովրդի ստեղծագործ կյանքը: Ուզում ես, վոր ել ավելի դեղեցիկ ծաղկի մեր հրաշագիզ կյանքը: Բայց ակամայից հիշում ես անցյալը: Միթե այդ յեղել ե:

Մենք ազատ յերկրի յերջանիկ քաղաքացիներ ենք: Իսկ ինչ էյինք առաջ: Հիշում ես ու փշաքաղվում:

Յե. Գ. Իլլարիոնովան աշխատում եր մանածագործական Փարբիկայում դեռևս հեղափոխութեանից առաջ: 1910 թվականին աշխատանքի մտնելու համար նրան մեկ տարի պակասում եր: Հարկ յեղավ տերտերին 3 ուրբլի վճարել, վորպեսզի ծնընդականում մեկ տարի ավելացներ: Այդպես ել 14 տարեկանից Փարբիկային աշխատանքի անցավ: Անդրադետ եր, իշխանավորներից վախենում եր: Միայն ողի քանի շիշ հարկ յեղավ հրամցընել վարպետներին ու յնիթավարպետներին: Նրանց հետ քեֆ անել չես ուզում,—բարեհաճիր փրկագնովել, այլապես աշխատանքից կարտաքսեն...

Իլլարիոնովան հիշում ե մի ծանր դիպված, վոր նրա գլուխը յեկավ Փարբիկայում. նրա մազերը մեքենայի մեջ ընկան և իրեն ել ներս քաշեցին... (Մինչև այժմ ել հետքերը ձեռքի վրա մնացել են): Հետեյալ որը հենց նրան, վոր տուժողն եր, 3 ուրբլի տուգանք դրին: Իսկ այն ժամանակ աշխատավորուհու համար այդ շատ մեծ փող եր:

Փարբիկայում ամարգի կերպով շահագործվելուց և ժամանակից շուտ ձերանալուց մեզ փրկեց խորհրդային իշխանութունը:

նք: Միայն խորհրդային իշխանութեան որով բանվորներն զգացին իսկական հոգատարութունը, տեսան իրենց աշխատանքի պաշտպանութունը և մարդկային վերաբերմունք դեպի կինը:

Սորհրդային իշխանութունը ժողովրդին տվեց աշխատանքի իրավունք և այդ աշխատանքը դարձրեց «պատվի գործ, փառքի գործ, արևութեան ու հերոսութեան գործ», ինչպես ասաց մեր սիրելի ուսուցիչ ու բարեկամ Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինը:

1924 թվականին Իլլարիոնովան զրազխութուն ձեռք բերեց, նույն տարին ել կուսակցութեան մեջ մտավ: Հետեյալ տարին ավարտեց Փարբիկային կից հանրակրթական վեցամսյա դասընթացները, իսկ 1930 թվականին ավարտեց Պրոֆշարժման կենտրոնական դպրոցը: Իլլարիոնովան Մոսկվայի մարզի Չուլկանոսկիների շրջանում ստախանովյան շարժման նախաձեռնողն ե: Այժմ նա Թեթև արդյունաբերութեան ակադեմիայի ուսկնդրուհի յե, փոխադրվել ե Վ կուրս, լավ ե սովորում: Իլլարիոնովանի ղաատխարակել ու ճանապարհ ե դուրս բերել Լենինի—Ստալինի մեր մեծ կուսակցութունը:

Մարուսյա Ֆոմինան Լենինգրադի ստախանովական մանանակագործուհի յե. չորս տարեկան հասակում մնացել ե վորբ: 9-ից մինչև 16 տարեկան հասակն աշխատել ե վորպես տնային ծառայող:

Անդրադետ եր: Բայց ա՛հ նա մտավ Չերժինսկու անվան Փարբիկան: Այդ 1932 թվականին եր: Ահա հենց այստեղ Մարուսիա Ֆոմինան զգաց, թե ինչ վատ բան ե տղետ, անդրադետուհի Ֆոմինան զգաց, թե ինչ վատ բան ե տղետ, անդրադետուհի Ֆոմինը. ուզում ե զրազետ մարդկանց հետ խոսել, բառեր չի զբտնում...

Բայց կոմյերիտիութունն ուշադրութեամբ շրջապատեց յերիտասարդ բանվորուհուն: Մարուսյան ավարտեց կիսազրադեաների դպրոցը և տեխկուրսերը: 1932 թվականին մտավ կոմյերիտիութեան մեջ: Յեղել ե շրջկոմի անդամ: Փարբիկայի չորստարվա աշխատանքով նա կարողացավ հիանալի աշխատավորուհի դառնալ:

Կոսովարութունը նրան պարգևատրել ե Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով:

Մարուսյա Վինոգրադովան 14 տարեկան աղջիկ էր, վոր Ֆարրիկա յեկավ. գրեթե բոլորովին անգրագետ էր: Նրա հայրն ու մայրը մեռել են թրջախտից. հեղափոխությունից առաջ ծանր էր մանածագործական Ֆարրիկայում աշխատելը: Գուռներ էյին ստանում:

Իսկ անժամ ինչպես է ապրում Վինոգրադովան:

Մարուսյային սովորեցրել են ստախանովյան դպրոցում: Նա լավ էր աշխատում և սովորում, և տեխմինիմումը հեշտությամբ տվեց: Նրան հետաքրքրեցին բուժքույրերի կուրսերը: Նա կանոնավորապես հաճախում էր այդ կուրսերը և 1935 թվականին կուրսերն ավարտեց «գերազանցով»: Ահա հենց այստեղ Մարուսյան զգաց, վոր կարող է լավ սովորել, և ցանկություն ունեցավ շարունակելու ուսումը:

Նրան սովորելու ուղարկեցին Թեթև արդյունաբերության ակադեմիան:

Մանածագործուհիներ Դուսյա և Մարուսյա Վինոգրադովաների անունները հայտնի չեն ամբողջ աշխարհին: Այդ աղջիկները համաշխարհային ռեկորդներ են շահել: Նրանք աշխատում էյին, հետ չմտալով մեկ-մեկուց, համառորեն բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը: Նրանք դադարից զադգյահի հետևից իրենց ղեկավարության տակ էյին առնում: Այսպես նրանք 26 դադարի վրա աշխատելու նորմայից անցան 216 դադարի վրա աշխատելու: Ում կապիտալիզմը զատապարտում էր անգրագիտության և ճորտական կյանքի, նրանց՝ Լենինի—Ստալինի կուսակցությունը և խորհրդային իշխանությունը գարձարին սոցիալիստական մեծ յերկրի յերկեղի մարդիկ:

Մարուսյա և Դուսյա Վինոգրադովաներին գերազանց աշխատանքի համար կառավարությունը պարգևատրել և Լենինի ջքանշանով:

* * *

Մեր յերկիրը հսկայական հաղթանակներով է ավարտում յերկրորդ հնգամյակը: Մեր յերկիրը դարձել է առատության յերկիր, հզոր պետություն, վորտեղ յուրաքանչյուր աշխատավոր ոգավում է նրա բարեքներից:

Դրա համար առաջին շնորհակալությունը ժողովրդի առաջնորդին, սիրելի Ստալինին:

Այդ նա յեր, վոր գուրգուրեց ու վողեորեց ստախանովականներին: Այդ նա ոգնեց սոցիալիստական մեծ մրցման կրակները բորբոքելու, վոր մեր հաղթանակների գրավական է ծառայել և ելի կծառայի:

Այդ մրցման մեջ մենք, ստախանովականներս, առաջից էյինք գնում, մասսաներին սովորեցնում էյինք աշխատանքի մեր մեթոդները: Մենք յերջանիկ ենք, վոր մենք արդեն միավորներ ու հարյուրներ չենք, այլ հազարներ ու տասնյակ հազարներ: Ստախանովականների թիվը միլիոններ կլինի:

Մոտենում են աշխատավորների պատգամավորների Խորհուրդների, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունները: Պետք է ընտրել այնպիսի մարդիկ, վորոնց համար պարզ են կոմունիզմի համար մղվող պայքարի մեծ խնդիրները, և վորոնք կկարոմի համար մղվող պայքարի մեծ խնդիրները, և վորոնք կկարողանան ղեկավարել յերկիրը, վորպեսզի հաղթականորեն գնանք դեպի կոմունիզմ:

Ձենք մոռանա, վոր մեր յերկիրը, ինչպես ասաց ընկեր Ստալինը, համաշխարհային պրոլետարիատի հարվածային բրեքադն է, մեղ է նայում ամբողջ աշխարհը: Նա լարված ուշադրադն է, մեղ է նայում ամբողջ աշխարհը: Մե ինչպես կկատարվեն մեզանում ընտրությամբ կղիտի, թե ինչպես կկատարվեն մեզանում ընտրությունները, առաջին ընտրություններն ըստ Ստալինյան Մեծ Մահմանադրության:

Մենք բոլորս գիտենք, թե իրենցից ինչ են ներկայացնում բուրժուական յերկրների գովված «գեմոկրատիան» և «ազատությունները», և մանավանդ այստեղ, վորտեղ իշխանությունը Ֆաշիստներն են գրավել:

Միմիայն մեր յերկրում ազատ ժողովուրդը բոլոր հնարավորություններն ունի ազատորեն, առանց վորևե սահմանափակումների արտահայտելու իր կամքը իշխանության որդանների ընտրությունների ժամանակ:

ԽՍՀՄ քաղաքացիները բոլորը մեկ մարդու պես պետք է մանակցեն ընտրություններին: Մարդկային հասարակության վերջնականապես չջախախտված

ված տականքը—ժողովրդի թշնամիները չեն ներհում, հոգևորականները շարժվում են, նրանք ընտրությունների ժամանակ կաշխատեն ազդել բնակչության հետամնաց խավերի վրա:

Ժողովրդի թաղնված թշնամիները, զիմակավորվելով, կաշխատեն Խորհուրդները սողոսկել, Խորհուրդներն անցկացնել իրենց գործակիցներին, կաշխատեն մեր ընտրությանն արժանի մարդկանց սևացնել:

Մեծագույն զգոնություն պետք է ցուցաբերի մեզնից յուրաքանչյուրը ընտրություններին պատրաստվելիս և ընտրությունների ժամանակ: Ընտրվողների ցուցակների մեջ չպետք է ընկնեն նրանք, ովքեր մեզ համար խորթ են, ովքեր մեզ համար ֆասակար են, ովքեր թշնամիների դեմ մղվող պայքարում թույլ են ու կարճատես:

Արտադրության առաջավոր ստախանովականները պետք է առաջավորներ լինեն նաև ընտրությունների ժամանակ:

Մենք մեր ընկերներին պետք է ոգնենք սովորելու ստախան ընտրական որենքը: Ընտրությունները պետք է ունենան լոցիալիստական կազմակերպվածություն և բոլշևիկյան գիսցիպլինա, վերպեսզի թշնամիները չկարողանան իրենց քիթը խոթել մեր գործի մեջ:

Մենք ստախանովաբար պայքարել ենք և պայքարում ենք ստախանյան մեծ խնդիրները կատարելու համար ժողովրդական տնտեսության մեջ: Ստախանովաբար կմասնակցենք Խորհուրդների ընտրություններին: Խորհրդային մեծ ժողովրդի կողմից պետական իշխանության որդաններն ուղարկված պատգամավորները պիտք է արժանավորությամբ կրեն աշխարհում ամենաբարձր այդ կոչումը:

Տ. Ս. ԳԵՄԻՆՈՎ.— շքանշանակիր, Մոսկվայի 1-ին պրոլետարական կարմրադրոշ գիվիզիայի մարտիկ:

ՅԵՍ ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՄ, ՅԵՍ ՇՊԱՐՏ ԵՄ

Յես 23 տարեկան եմ: Յես յերիտասարդ եմ, առողջ, յերջանիկ: Յես ուրախ եմ, վոր կարողանում եմ լավ աշխատել:

1935 թվին յես աշխատում եյի Չմիելսկի ՄՏ կայանում՝ XТЗ արտկտորի վրա: Յես սիրում եյի իմ մեքենան, հպարտանում եյի, վոր այն ինձ էն վատահել, նրանով յես շուռ եյի տախ կոլտնտեսային սեանողի շերտերը: Այդ ժամանակ մենք, յորակտորիտներս բարձրացրինք կոլտնտեսային բերքը: Ամառն ինձ 250 հեկտար հերկելու նորմա տվին. յես վճռեցի ավելի հերկել և հերկեցի 1095 հեկտար: Ամբողջ Միության մեջ իմացան իմ աշխատանքի մասին: Կառավարությունն ինձ պարգևատրեց իմ աշխատանքի մասին: Կառավարությունն ինձ ընկերոջ, վորի հետ յես մրցության Լենինի շքանշանով, իսկ իմ ընկերոջ, վորի հետ յես մրցության Էյի մտել, արակտորային ջոկատի բրիգադավար ընկ: Արայուկովին՝ Աշխատանքի կարմիր Դրոշի շքանշանով: Իմ կյանքում այդ ամենամեծ ուրախությունն էր, իմ առաջին ամենայերջանիկ որը:

Շատ բաների մասին յես խորը մտածեցի, յերբ շքանշանեյին հանձնում ինձ: Յես այն մասին ել մտածեցի, վոր աշխատանքը միայն մեր յերկրումն է այսպես գնահատվում:

Իմ յերկրորդ յերջանիկ որը յեղավ 1936 թվի աշնան մի որ, յերբ յերկիրն ինձ կանչեց հարազատ կարմիր բանակ:

Բարեկամները, ազգականները, ծանոթներն ինձ ճանապարհ գնելիս խիստ նակաղ տվին ինձ—բանակում լինել ճիշտ նույն գիսի առաջավոր մարդ, ինչպիսին յես կոլտնտեսության մեջն

եմ յեզել, նակազ ավին ինձ՝ ավելի լավ սովորել, դառնալ զիպուռի հրաձիգ ե լավագուցն կարմիր բանակային:

Յես բանակումն եմ: Հարա եմ զգում ինձ այն բանի համար, վոր ինձ վատահացել են իմ սոցիալիստական հայրենիքի պաշտպանությունը, պահպանությունը: Իսկ պաշտպանելու ինձ ե իմ ընկերների համար շատ բան կա:

Նայեցեք մեր յերկրի քարտեզին—աճել են հարյուրավոր նոր գործարաններ, ֆաբրիկաներ, կոլանտեսություններ, խորհանաեսություններ, ՄՏԿ-ներ, ելեկարոկայաններ: Գետերն ու ծովերը ջրանցքներով միացած են: Իմ յերջանիկ հայրենիքը որ որի վրա ե՛ լավանում, ե՛ հարստանում ե: Յեղ անա, ինձ կանչեցին պաշտպանելու այս հայրենիքը, այս ուրախ կյանքը: Մթթե յես կարող եյի հպարտությամբ չլցվել: Յես հպարտ եմ զգում ինձ ե, յեթե հարկ լինի, հանուն մեր յերկրի սահմանների ամփրօտություն իմ կյանքը առ յես չեմ ափսոսում: Կարմիր բանակի յերիտասարդ մարտիկները հետ միասին յես աչդիսի յերզում ավի ամբողջ ժողովրդին և սերելի ընկեր Մտալինին մաչխի 1-ին, Մոսկվայի Կարմիր հրապարակում:

1936 թվի նոյեմբերի 7-ին, Սոցիալիստական Մեծ հեղափոխության տարեդարձին, մեր հրամանատարներն ու շարքային մարտիկները Մոսկվայի Կարմիր բանակի տանը հանդիպում ունեցան ոտարեկրյա բանվորների հետ, վորոնք մեզ մոտ եյին յեկել տոներին: Նրանց հետ յերկար զրույց արին մարտիկներն ու հրամանատարները: Հյուրերը շատ հարցեր եյին տալիս: Նրանք զարմացան, յերբ իմացան, վոր մեր հրամանատարները զենչչիկներ չունեն:

—Այդ ինչպիս ե, վոր սպաները զենչչիկներ չունեն:

—Այո, չունեն:

Ոտարեկրացի ընկերները ծափ տվին, ուրախացան և ուզեցին, վոր իրենց ապագա բանվոր-պուլգացիական բանակը նմանվի մեր բանակին:

Նրանք իմացան, վոր մեր հրամանատարներն ու մարտիկները ընկերներ են: Մառայության ժամանակ մարտիկը յենթարկվում ե, ծառայությունից հետո մարտիկը հրամանատարի հետ շախ-

մատ, վորիցրոլ և խաղում, միասին գնում են կինո, թատրոն: Այս բանը նրանց զարմացրեց և ուրախացրեց:

—Ինչ տարբերություն կա զինվորի և կարմիր բանակային մարտիկի միջև, հարց տվեց ոտարեկրացի բանվորը՝ կարմիր բանակայինին:

Կարմիր բանակայինը պատասխանեց.

—Ահա յես յերկու տարի ծառայեցի—վերջացրի և զեռ ծառայությունս չվերջացրած գունդ յեկան իմ հետևից, կանչում են ինձ աշխատանքի: Իսկ կապիտալիստական բանակի զինվորը զորանոցներից դուրս գալուց հետո գործազուրկ ե դառնում:

Կարմիր բանակայինի պատասխանը ծածկվեց բանվորների բուն ծավահարությամբ: Ոտարեկրացի բանվորները նաև նրա համար եյին ծափահարում, վոր մեր մարտիկները, ինչպես և հրամանատարները ընտրում են և ընտրվում են աշխատավորների պատգամավորների Խորհուրդների իշխանության որգաններում:

—Ինչ լավ կլինեի, յեթե մեզ մոտ ել այդպես լինեի,—նախանձելով ասում եյին նրանք:

Կապիտալիստական բանակում զինվորն իրավազուրկ ե, նրան քաղաքացիական թերթեր չեն տալիս, նրան թուլլ չեն տալիս շփվելու քաղաքացիական բնակչության հետ, բանվորների հետ, իր դասակարգի ընկերները, յեղբայրները հետ: Բուրժուական յերկրներից և վոչ մեկում զինվորներին ու սպաներին թուլլ չեն տալիս մասնակցելու որենսդրական որգանների ընտրություններին: Բուրժուական այս ճանապարհով և հեռացնում միլիոնավոր աշխատավորներին՝ պետական գործերին մասնակցելուց:

Մենք, կարմիր բանակայիններս, բոլորովին այլ պայմաններում ենք ապրում: Ամենից առաջ, մենք վոչ միայն ուղիղ կան, այլև հանրակրթական ու քաղաքական առարկաներ ենք սովորում: Մեր հրամանատարները կամենում են, վոր մենք առաջավոր կրթված մարդիկ լինենք: Մեր մեջ զաստիարակում են մեծագույն անձնվիրության զգացմունք հանդեպ իր ժողովրդի և պարաստականություն՝ հանուն նրա տալու իր վողջ ուժերը, և յեթե պահանջվի—իր կյանքը: Յերկիրը մեզ տալիս և

բոլոր այն իրավունքները, վոր վայելում և մեր ամբողջ ժողովուրդը և մենք այդ իրավունքներից ոգտվում ենք և պաշտպանում ենք այն: Մենք միշտ զգում ենք ամբողջ ժողովրդի սերն ու հոգատարությունը մեր մասին, մենք միշտ պատրաստ ենք կովելու մեր հայրենիքի բնոր թշնամիների գեմ, մինչև արքան վերջին կաթիլը պաշտպանելու խորհրդային ժողովրդի նվաճած յերջանիկ կյանքը:

Կարժիր բանակի մարտիկներն ու հրամանատարները պետության բոլոր ժողովուրդների քաղաքացիների հետ համահավասար իրավունքներ ունեն: Կարմիրբանակայինների ժողովները՝ ղինվորական մասերում, — բանվորների, ծառայողների, կուտակատեսականների ժողովներին հավասար, ունեն իրավունք՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության համար թեկնածուներ առաջադրելու:

Ընտրական օրենքի համաձայն ղինվորական մասերն ու զորական միավորումներն ընտրական առանձին տեղամասեր են կազմում, վորտեղ և մենք բոլորս, կարմիրբանակայիններս, Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուների համար մեր ձայնն ենք տալու:

Ստալինյան ընտրական օրենքն իմաստուն կերպով նախատեսել է և այն, վոր սահմաններ պաշտպանող Կարմիր բանակի մարտիկներն ու հրամանատարները յերբեմն գտնվում են հեռավոր վայրերում, փոքր շտաբներում են ծառայում: Յեվ այնտեղ մարտիկները հրացանը ձեռքին, զգոնությունը վոչ մի ըոպե չթուլացնելով, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորներ կրնաբեն, քանի վոր ղինվորական մանր մասերում ել (վորոնք 50-ից վոչ պակաս ընտրող են հաշվում) ընտրական տեղամասեր են տեղծվելու:

Ամբողջ ժողովրդի նման մենք ել ենք քվեարկելու, մեր ձայնը տալով մեր առաջնորդներին, նշանավոր մարդկանց — տրեսակական ճակատի, ղիտության ու արվեստի ստախանովական ներին և պաշտպանության ստախանովական հերոսներին: ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի համար մենք ընտրում ենք մարտիկներէ և հրամանատարների լավագույններից լավագույններին, մեք

հայրենիքի անկախությունն ու ազատությունն ամուր կերպով պաշտպանողներին: Մենք յերգվում ենք անխորտակելի պատե նման կանգնել մեր հայրենիքի պաշտպանության համար, վորպեսզի անխիժյալ թշնամու ձեռքը նրան չչիպչի: Ով հարձակվի մեզ վրա, նա կկործանվի: Մեր յուրաքանչյուր մարտիկը հայրենի հողից վոչ մի թիզ չի ղիջի: Մեր պատգամավորներին մենք նակազ ենք տալիս՝ ել ավելի ամրացնել ԽՍՀՄ պաշտպանությունն ու հզորությունը:

Յես յերխտասարդ եմ և հպարտ եմ իմ ժողովրդով, սոցիալիստական իմ հայրենիքով: Մենք բոլորս յերխտասարդ ենք, ուժեղ ենք: Չկա մի ուժ, վոր կարողանար կանգնեցնել մեզ ղեպէ կոմունիզմը տանող մեր ճանապարհին:

ՄԱՐԻԱ ԵՊՊ — շքանշանակիր
Դենպրոպետրովսկի մարզի
Ռոտֆրոնտ ուսյոնի Երնստ
Թելմանի անվան կոլտնտե-
սության կթվոր:

ԱՌԱՋ ԲԱՇԵՑԵՔ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Շրջադրժկոմսերի և գյուղխորհուրդների նախագահ ընտրված
յերիտասարդներ մեզ մոտ քիչ կան, իսկ իշխանության բարձ-
րագույն որդաններում նրանք ավելի քիչ են: Բայց չէ՞ վոր թե
Փարբիկաներում և թե կոլտնտեսային գյուղում աճել են բազ-
մաթիվ նշանավոր յերիտասարդ մարդիկ, աղջիկներ և տղաներ:
Նրանց մեջ կան բազմաթիվ կազմակերպիչներ, գիտակներ և ամ-
բողջ յերկրին հայտնի տրակտորիստներ, կոմբայնավարներ և
ողակավարներ: Ո՞ւմ հայտնի չեն նշանավոր տրակտորիստներ՝
Պաշա Կովարդակի, Պաշա Անդելինայի, Պետրովայի և շատ ուրիշ-
ների անունները:

Մեզ մոտ աճում է պանծալի, հզոր և ամուր յերիտասար-
դություն: Արտադրողական աշխատանքն ուժեղ կերպով հրապու-
րում է յերիտասարդության, և պետք է, վոր նա ել ավելի ձգտի,
եւ ավելի համարձակ գնա դեպի պետական աշխատանք: Միթե՞
այստեղ յերիտասարդների համար աշխատանք չի գտնվում: Լե-
նինի—Ստալինի կուսակցությունը մեզ, առաջներում վորևե լավ
բանի վոչ մի հույս չունեցող մերկ-չքավորներիս դաստիարակեց
և մեզ համար բացեց լուսավոր ուղի, լայն ճանապարհ դեպի գի-
տություն ու հարգանք:

Որինակներ բերելու համար հեռու գնալու կարիք չկա. իմ

կյանքի ուղին ապացույց է այն բանի, թե ինչպես է գնահատ-
վում մարդն ու նրա աշխատանքը սոցիալիստական մեր հայրե-
նիքում: Յես կուզեյի, վոր կապիտալիստական յերկրներում,
առանձնապես Ֆաշիստական յերկրներում ապրող բանվորներն
ու գյուղացիներն իմանալին՝ ինչպես ենք ապրում մենք Խորհրդ-
դային Միության մեջ:

Յես գերմանուհի յեմ: Թեև յես դեռ յերիտասարդ եմ—յե-
քսան տարեկանից մի թիչ ավելի յեմ, սակայն ինձ ել վիճակվեց
դառն բաժակից ճաշակել:

Մինչև կոլեկտիվացումը մեր ընտանիքը խեղճ եր ապրում:
Խեղճ եյինք ապրում այն պատճառով, վորովհետև Ռիկկենաու
գերմանական գաղութում կար կուլակների—աշխարհակերների
բունացում: Այժմ յես ամեն ինչով ապահովված եմ, ստախանո-
վական եմ դարձել և ստացել եմ Լենինի շքանշան: Ինչպե՞ս յե-
րավ այս:

Կոլտնտեսությունում ինձ հանձնարարեցին խնամել կովե-
րին. թվում եր մի վոքրիկ գործ է:

Ինձ հանձնարարված գործին յես սիրով կպա: Ուսումնասի-
րեցի կովերի բոլոր սովորություններն ու վարվելակերպը: Առա-
ջին իսկ տարում յես կովերից ձեռք բերի կրկնակի անգամ ավելի
կաթնատվություն, քան կոլտնտեսության այլ կթվորները: Յես
հաճառորեն աշխատեցի, գրքեր կարդացի և իմ աշխատանքում
ավելի ու ավելի աճեցի: Իմ խնամքի տակ գտնվող կովերն սկսե-
ցին յերկու, յերեք անգամ ավելի կաթ տալ:

Յես սիրում եյի «Պտաշկա» կովին: Նրա հետ յես առանձ-
նապես բարեկամ եյի: 1931 թվին իմ «Պտաշկան» որական տա-
լիս եր 15 լիտր, իսկ տարին—2200 լիտրից ավելի: 1934
թվին համար յես պարտավորություն ստանձնեցի «Պտաշկայից»
ստանալ 4000 լիտր կաթ, հասնել որական 28 լիտր կաթ ստա-
նալուն: Յես հասա այդ բանին: Մի այլ կով՝ «Ռուսալիս»-ն
տարեկան տալիս եր 1000 լիտր: Յես նրա կաթնատվությունը
բարձրացրի—հասցրի 3000 լիտրի: Իմ մասին սկսեցին խոսել շր-
ջանում, մարդում, Ուկրաինական ամբողջ հանրապետությունում:
Այսպես սկսվեց իմ ուրախ, յերջանիկ կյանքը:

Մի անգամ յես նամակ ստացա Ուկրաինական ԽՍ հանրապետութեան Հողօրոգիութից. «Ընկեր Եպպ, յեկեք կթվորների խորհրդակցութեան»: Յես մտածեցի, ինչպէս գնամ: ՁԲ վոր յեկայնքումս վոչ մի անգամ գնացքով չեմ ճամբորդել: Ինձ համոզեցին, գնացի: Ուրախութեան և հրաշք եր ինձ համար, յերբ յեհիսիվ հասա: Յես համեմատութեան գրի քաղաքը գլուղի հետ: Ինձ զարմանալի թվացին չտեսնված թվով շատ յեռուն ուրախ մարդիկ, մեծ տներ, ֆաբրիկաներ, գործարաններ, հսկայական քանակութեամբ ավտոները՝ փողոցներում: «Ինչպէս հարուստ ու յերջանիկ ե մեր հայրենիքը»,—մտածեցի յես:

Ուկր. Կ(բ)ԿԿ-ի քարտուղար ընկեր Կոսիորն ինձ իր մտհրավիրեց գրուցելու: Ինձ 500 սուրով պարգևատրեցին: Յես դեռտուն չհասած, ինձ խորհրդակցութեան են կանչում Մոսկվա, Մանդարդյունաբերութեան ժողովում ընկեր Միկոյանի մոտ: Ընկեր Միկոյանն ինձ ընդունեց շատ քնքշութեամբ, յերկար հարց ու փորձ արեց աշխատանքի մասին: Այստեղ յես պարգևատրվեցի 1000 սուրով և ձեռքի մի ժամացույցով:

Ընկեր Միկոյանի մոտ յես խոստացա հասնել այն բանին, վոր իմ կովերի խմբից տարեկան ստանամ 3000 լիտրից վոչ պակաս կիթ, իսկ «Պտաշկա»-յից՝ 7000 լիտր: Յեվ այս նոք պարտավորութեանը յես կատարեցի:

1935 թվի փետրվարին ինձ կանչեցին անասնապահների Համալիութենական խորհրդակցութեան: Հիշում եմ Կրեմլի սրահը, հազարավոր փայտուն կրակները, ազմուկը: Ամբիոնի վրայերեացին ընկերներ Ստալինը, Մորտովը, Որջոնիկիձեն, Վորոշիլովը, Չուբարը, Ժգանովը, Կալինինը, Պետրովսկին և կուսակցութեան ու կառավարութեան այլու ղեկավարները: Կարելի չեսանել ամեն ինչ յերգ եր թվում ինձ: Յես, յերբեմնի չքավոր, մոռացված գերմանացի աղջիկս, մասնակցում եմ բոլոր ժողովուրդների սոցիալիստական մեծ հայրենիքի կուսակցութեան ու կառավարութեան ղեկավարների խորհրդակցութեանը:

Յես յելույթ ունեցա, խոսեցի գերմաներին: Բարձրանալով ամբիոն, յես ասացի ընկեր Ստալինին «Բարև, ընկեր Ստալին»:

Վողջույն Ձեզ մեր կոլտնտեսականների և կոմյերիտականների կողմից»:

Իսկ ընկեր Ստալինն ինձ պատասխանում և գերմաներին. «Դուռուն տադ: Դանգե շեյն» (Բարի ուր Շնորհակալ եմ):

Հետո յես ասացի. «Յես Ձեզ խոստանում եմ, ընկեր Ստալին, 1936 թվին «Պտաշկա»-յից ստանալ 10000 լիտր և կովերի ամբողջ խմբից ձեռք բերել միջին հաշվով, 5000 լիտր կաթնատվութեան: Նա քնքշութեամբ նայեց ինձ և ասաց. «Ձեր գուտ, գեր գուտ»: (Շատ լավ, շատ լա!):

Ընկեր Ստալինը ժպտաց: Ուրախացած, առաջնորդի խոսքիցից վողեշնչված, յես գուրս յեկա ամբիոնից, իսկ յերբ ամբիոնից հեռացել եյի, ընկեր Ստալինն ինձ ասաց. «Ապրես, առաջնութեանը մի գիջիր»:

Փետրվարի 25-ին ինձ կանչեցին ԽՍՀՄ կենտգործկոմ: Մի խայել Իվանովիչ Կալինինն ինձ հանձնեց Լենինի շքանշան:

Վերանդ, վճիռ յերկրում կարող ե վորեւ նման բան պատասել:

Վողեվորված ու յերջանկացած յես գնացի տուն, կոլտնտեսութեան: Հիշեցի անցած թշվառ, աղքատ կյանքը և մեր իրավազրկութեանը, համեմատեցի այդ կյանքն այն բանի հետ, ինչ յես տեսա և ապրեցի այժմ և ել ավելի լավ աշխատելու, ել ավելի շատ հաղթանակներ ձեռք բերելու ցանկութեամբ լցվեցի:

Յես, անցյալում բատրակուհի, այժմ շքանշանակիր եմ և ուսանողուհի գյուղատնտեսական բարձրագույն դպրոցում: Յես իմ առջև նպատակ եմ դրել անասնապահութեան դժով պրոֆեսորի կոչում ստանալ: Յեվ հաստատապես յես այդ բանին կհասնեմ: Սոցիալիստական մեր կառավարութեանը մեզ համար անելու, Պոլիտբյուրոյի սովորելու այդպիսի հնարավորութեաններ ե ընձեզարգանալու, սովորելու այդպիսի հնարավորութեաններ ե ընձեռում: Իսկ ինչ, միթե յես բացառութեան եմ: Վոչ թե միայն ում: Իսկ ինչ, միթե յես բացառութեան եմ: Վոչ թե միայն յես. նախկինում մերի ու աղքատ հազարավոր յերիտասարդներ յես. նախկինում մերի ու աղքատ հազարավոր յերիտասարդներ նապարհ: Յերիտասարդութեանը պետք ե համարձակ գնա դեպի պետական կառավարման գործը:

Յեվ ինչքան նշանավոր մարդիկ անեցին մեր նշանավոր

յերկրում: Ահա, որինսկ, իմ սշակերտները. պանծալի ենտու-
զիստաներ Եկատերինա Ֆրեզին՝ «Բոլշեիկ» կոլտնտեսութեանից,
Մարիա Դիկը՝ «Ուզարնիկ» կոլտնտեսութեանից, Ելինա Պոպո-
վան՝ մեր կոլտնտեսութեանից: Սրանք բոլորն ստախանովյան
աշխատանքով կարողացան յերեք, չորս անգամով բարձրացնել
կիթի նորման, լրացուցիչ կերպով յերկրին տվին տոններով միս,
յուղ, կաթ: Նրանք վոչ միայն լավ արձագրողներ են, այլև հա-
սարակական գծով գերազանցիկ աշխատողներ են: Այսպիսի յերի-
տասարդներին կտա իր ձայնը մեր գյուղը: Այսպիսի յերիտասար-
դութեանը պետք է առաջ քաշել աշխատավորների պատգամավոր-
ների խորհուրդներում, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդում: Նրանք
արդեն կազմակերպական աշխատանքի փորձ և հսկայական յեռանդ
ունեն:

* * *

Փաշխտական խավարամոլները, մեր մասին, խորհրդային
Միութեանում ապրող գերմանացիների մասին. վայրենի ստեր են
հորինում—չառսխոսում են սովի, գերմանացիներին հալածելու,
գերմանացի կոլտնտեսականների անելանելի, ծանր կյանքի մա-
սին: Յնթե կա մի սեղ, ուր գերմանացիները վատ են ապրում,
ապա այդ, ամենից առաջ, Փաշխտական Գերմանիայումն է: Իսկ
մենք, խորհուրդների յերկրում ապրող գերմանացիներս վոչ միայն
կուշտ ենք, հազնված, մեկք տղատ ենք: Յնվ մենք իրավունք ու-
նենք վոչ միայն իշխանութեան որդաններ ընտրելու, այլև ըն-
տրվելու: Մեզ մոտ հարյուրավոր կանայք պետութեան են կա-
ռավարում: Թող Հիտլերը թեկուզ մի այդպիսի գերմանուհու
անուն տա Գերմանիայում: Թող նա տպագրել տա իմ կենսա-
գրութեանն իր Փաշխտական թերթերում: Նա չի հանդգնի: Այն
ժամանակ ինչ պիտի սսեն իրեն Փաշխտական Գերմանիայի
գյուղացիները:

Միայն խորհրդային մեր հայրենի հողի վրա յե, վոր բո-
լոր աշխատավորներն ունեն կրթութեան, աշխատանքի, հանգըս-
տի, պետութեան կառավարելու իրավունք. ամեն վոր ունի այդ
իրավունքը՝ լինի նա գերմանացի, հրեա, հայ թե բաշկիր: Մեզ

մոտ ամեն վոր, վոր ազնվորեն և աշխատում և աշխատում է հա-
սարակութեան համար, կարող է լինել նշանավոր մարդ:

Յնվ մեզ, յերիտասարդներիս, մեր հայրերի կողմից նվաճ-
ված մեծ իրավունքներ են տրված: Յերիտասարդի քաղաքական
գիտակցութեանը շատ է բարձրացել, նա գիտի թե ինչի պետք
է հասնել և ուր պետք է գնալ:

Ուրեմն լինենք բոլորս միասին, միասնական ընտանիքով
ընտրենք մեր յերկրի լավագույն մարդկանց՝ իշխանութեան
բարձրագույն որդանների համար: Յես կոչ եմ անում խորհրդա-
յին ամբողջ յերիտասարդութեան՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի
պատգամավորների ընտրութեանը ցույց տալ ամենաակտիվ մաս-
նակցութեան, կոչ եմ անում բոլորին ներկայանալ ընտրութեան
որը ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը, վորի համար մենք մեր յերկ-
րի լավագույն մարդկանց ենք ընտրում, մեզ ապահովելու յե
ել ավելի յերջանիկ և ուրախ կյանք:

Յերիտասարդութեանն իր ձայնը կտա լավագույն բոլե-
վիկների, լավագույն կոմյերիտականների, լավագույն, հաստա-
տակամ և մարտական յերիտասարդութեան, ստախանովական-
ների, խորհրդային Միութեան հերոսներին:

Կ. Գ. ԳՆՎՐԻՆՈՎԱ — Ստա-
լինի անվան ավտոգործա-
րանի (նախկին ԱՄՈ) ստա-
խանավական, Մոսկվայի
քաղխորհրդի անդամ:

ՊԱՏԳԱՍԱՎՈՐԸ

Շատ յերիտասարդներ մտածում են այսպես, վոր այն բո-
լորը, ինչ շրջապատում է իրենց, այդպես էլ պիտի լիներ: Նրանք
չեն խորհում այն բանի վրա, վոր այս յերջանիկ, ազատ կյանքը
մեր հայրերն ու մայրերն են նվաճել, նվաճել են այն մեզ հա-
մար՝ դաժան կովում... Այստեղից՝ այն վստահությունը, վոր այս
կյանքը վոչ վոք չի լսի: Շատերը գեռես չեն հասկանում, վոր
հարկավոր է պաշտպանել մեր յերջանկությունը, հարկավոր է
գեռես հանուն նրա՝ կովի աշխատավորների թշնամիների գեռ:

Մեր յերկիրը, մեր կուսակցությունը կովում են մեր յերի-
տասարգությունը՝ պայքարի համար, նրանից պետական ապագա
գործիչներ են դաստիարակում: Յերիտասարգությանը լայն հնա-
բավություններ են ընձեռնվում քաղաքական կյանքի մասնակ-
ցության համար: Ստալինյան մեծ Սահմանադրության մեջ վոսկի-
տառերով է արձանագրված, վոր ԽՍՀՄ ամբողջ յերիտասարգու-
ների Խորհուրդներ ընտրելու է պետական իշխանության որդան-
ներում ընտրվելու իրավունք ունի:

Առաջ հազվագեղ էր լինում, վոր յես մտածեյի այն մա-
սին, թե ինչ բան են Խորհուրդները: Յես այն ժամանակ չգի-

տեյի, թե ինչ են անում պատգամավորները Խորհուրդներում,
սակայն նրանց հանդեսը շատ մեծ հարգանքով էյի լցված:

Յեկավ 1934 տարին: Յես աշխատում էյի գործարանում և
յեղա կոմյերիտական կազմակերպիչ: Խորհուրդների ընտրու-
թյունները մոտենում էյին: Մեզ մոտ, գործարան յեկավ Միխայիլ
Իվանովիչ Կալինինը: Սոսեց ընտրու Մյունների մասին: Պատմեց,
թե ինչ բանի շնորհիվ մենք ստացանք ձայն տալու իրավունք,
պատմեց, թե ինչքան մեծ է այդ իրավունքը:

Այդ հոգեշահ պատմությունը շատ հրապուրիչ էր և հետա-
բերելի:

Մեզանից վոչ վոք նախապես չեր մտածել այդ իրավունքի
մասին: Մեզ բնական էր թվում, վոր մեզ մոտ Խորհրդային
Միությոնում կան Խորհուրդներ—իշխանության որդաններ, և
վոր մենք Խորհուրդներում ընտրում ենք մեր բանվորներին,
ծառայողներին, կարմիր բանակայիններին ու գյուղացիներին:

Միխայիլ Իվանովիչը խոսում էր դանդաղ, ցածր և աշխույժ
հայացքը շուտ տալով դեպի սրահը, ուշադրությամբ դիտում էր:
«Դուք գեռես վոչ մի անգամ ընտրություններին չեք մասնակ-
ցել: Իսկ այդ մեծ, լուրջ գործ է: Խորը մտածեցեք, թե ում եք
ընտրում Խորհուրդների համար»:

Այդ գեղուցումը յերկար ժամանակ իմ հիշողության մեջ էր:
Յես մտածեցի. «Պետք է լավագույն կերպով նախապատրաստվել
ընտրությունների համար: Պետք է ստուգել, թե մեր պատգա-
մավորներն ինչ են արել»:

Հաշվետու ժողովում բանվորները գտան, վոր մեր պատգա-
մավորները վատ են աշխատել: Բանվորները վրդովված, հիշեցրին
պատգամավորներին հին նակագները և, խոր կերպով գլուխներն
որորելով՝ ասում էյին. «Ահա ձեզ մարդիկ, վորոնք բան չեն շի-
որդել: Իսկ ինչ են արել ուրեմն նրանք այնտեղ»: Մի ծայրից
մյուսը, մի դազգյանից մյուսը, մի հերթափոխից մյուսը ցեխը
բռնվեց այն մտքով, թե պետք է ավելի լավ մտածել՝ ում ընտ-
րել Խորհուրդների համար:

* *

Մեր կոմյերխական խումբը նույնպես պատրաստվեց ընտրությունների համար: Մենք վորոշեցինք Սորհուրդների ընտրության որը դիմավորել պլանի գերակատարումով: Առավոտնեքը հավաքվում, կարգում եյինք Սորհուրդների մասին յեղած նյութերը: Իսկ որվա ընթացքում աշխատում եյինք և լավ եյինք աշխատում:

Յեվ հանկարծ... ինձ համար այդ պատահեց կատարելապես անսպասելի կերպով: Նախ յես ինչ վոր մի տեղ լսեցի իմ ազգանունը, յես նույնիսկ չհասկացա, թե ինչ բանի համար եր այդ անունը տրվում: Հետո յես տեսա իմ ազգանունը ցուցակում՝ տամն այլ ազգանունների շարքում: Յես մինչև անգամ չհասկացա թե իսկապես ասած այդ ինչի համար ե, սակայն հուզումն ինձ բռնեց: Առաջին որն աշխատանքն ել ինչ վոր առաջ չեր գնում: Միթե, միտք եյի անում յես, ինձ կընտրեն: Բայց անա նայում եմ ցեխին, ամեն կողմ քննարկում են... Հիշում եմ, ցեխը Երվան հարյուրավոր մարդկանցով: Ինչի մասին խոսեցի, լավ չեմ հիշում... Խոսեցի յերիտասարդության շերմ սիրո մասին՝ դեպի մեր հայրենիքը... դեպի մեր սիրելի Ստալինը: Ժպտացող դեմքերից հասկացա, վոր յես ճիշտ խոսեցի, իսկապես այն, ինչ ուզում եյի ասել:

Ինձ ընտրեցին Մոսկվայի խորհրդի անդամ:

* *

Մեծ ցանկություն ունեյի Սորհուրդում աշխատելու, պետք եր գեռ վորոշել, վեր սեկցիայում գրվել: Յես գրվեցի «դատախազության, դատարանի, միլիցիայի» սեկցիայում: Յես այս սեկցիան ընտրեցի նրա համար, վորովհետև հաճախ բողոքներ եյի լսում դատավորների վատ աշխատանքի, բյուրոկրատիզմի, քաղաքակրթների մասին: Այստեղ հարկավոր ե առանձնապես զգայուն վերաբերմունք մարդու նկատմամբ, հարկավոր ե վոչ թե վերավորել նրա արժանապատվությունը, այլ սովորեցնել նրան, յեթե

նա սխալվում ե, և առանց հապաղելու վոչնչացնելով ամեն տեսակ թշնամու՝ խափանել նրա գործունեյությունը: Այդ սեկցիայում, մտածում եյի յես, իմ ուժերը կիրառելու հնարավորություն կունենամ:

Դատախազությունում իմ առաջին հերթապահությունն եր Միջանցքում լաց ե լինում մի կին: Նա վիշտ ուներ և նրան թվում եր, թե արդեն վոչ վոք չի ոգնի, թեև նա ոգնության համար դեռևս վոչ մի տեղ չեր դիմել:

Յես նրան յերկար համոզեցի, և նա հանգստացած գնաց...

Յես սիրում եյի տեսնել, թե ինչպես դատախազը զգայունորեն, սուր հարցերով բաց եր անում մարդուն: Բայց այստեղ յես նայեցի բողոքի գրքին: Այդ գիրքն ինձ շատ հիշեցրեց Չեխովի հայտնի կայարանային գիրքը: Շատ վաղուց արձանագրված բողոքներ մնացել են առանց պատասխանի: Գիրքը քրքրված ե, կեղտոտ: Թերթերը կարված չեն... Յես զարմացա, թե ինչ բան ե այս, ինչպես ե վոր դատախազն իր մոտ թույլ ե տալիս այդպիսի անկարգություն:

Այդ մասին յես ասացի դատախազին: Նա ինձ հետ համաձայնեց— չեյի նկատել այդ ճիշտ վոր, բացի այդ ժամանակ ել չկա: Յես լուռ մնացի: Բայց հենց այն պատճառով, վոր յես վոչ չինչ չպատասխանեցի, նա զգաց, վոր իսկույն պետք ե փոխել բողոքի գրքի հանդեպ ցույց տրվող վերաբերմունքը: Պատգամավորը դատախազի սխալն ուղղեց, հիշեցնելով նրան, վոր մարդու և նրա բողոքի հանդեպ պետք ե հարգանք ունենալ:

* *

Սեկցիայի պլենումներից մեկում ինձ ընտրեցին վորպես անգամ սեկցիայի բյուրոյի: Հուզմունքից գողալով յես սպասում եյի բյուրոյի առաջին նիստին: Ինչպե՞ս պետք ե պահեմ ինձ այնտեղ: Ի՞նչ կարող եմ յես ասել: Ի՞նչ խորհուրդ կարող եմ տալ: Չե՞ վոր ինձնից բացի բյուրոյում կան այնպիսի մարդիկ, ինչպես Մոսկվա քաղաքի դատախազն ե, Մոսկվայի քաղաքային դատարանի ավագ դատավորը և ուրիշ վորձված մարդիկ:

Անն սեկցիայի տաղին նիստը: Յես նստած եմ, լուռ լսում եմ և ինձ շատ անհարմար դրուժյան մեջ եմ դրում: Բյուրոյի նախագահը, ըստ յերեւոյթին, նկատեց իմ դրուժյունը և, չիրբ բոլորն արտահայտեցին, հարցրեց, «Իսկ ինչ է ձեր կարծիքը, ընկեր Գավրիլովա, այս հարցի մասին»:

Կարմրելով, նախ շատ կամաց ձայնով (ընդուս կարծես թե չորացել եր և հագիվ եր դանում), հետո ավելի բարձրացնելով ձայնս, յես ասացի իմ կարծիքը: Հետո, ծանոթանալով դատախազության, դատարանի և միլիցիայի աշխատանքին, յես արդեն սկսեցի ավելի համարձակ յիւրեթեւեռ ունենալ, քննադատում էյի վատ աշխատանքը և առաջ էյի քաշում ցավոտ հարցերը: Բյուրոն ինձ համար դպրոց եր:

Պատգամավորը պետք է ամուր կապված լինի մասսաների հետ: Պատգամավորը պետք է կարողանա լուծել յուրաքանչյուր հարց, վորի համար դիմում են իրեն:

Հիշում եմ, անապատտան յերեխաների դեմ պայքարող կետերից մեկից բերին մոտ տասնմեկ տարեկան յերկու նրանք Հյուսիսային Կովկասից փախել Մոսկվա եյին յեկել, վորպեսզի «Լենինին և Ստալինին տեսնեն»: Շատ հաճելի յեր և ուրախ մեզ համար տեսնել, վոր մենք խիզախ յերեխաներ ունենք, մյուս կողմից, հարկավոր եր նրանց բացատրել, վորպեսզի նրանք հոսկանային, թե չպետք եր նրանք Մոսկվա գոյին մենակ:

Տրյոխգորնի ֆարբիկայի մի բանվորուհի դիմեց ինձ մի խնդրով, վորպեսզի ողնեմ նրան լուծելու իր հարևանի հետ ունեցած բնակարանային սկանդալը: Յես գնացի նրանց տուն. մենք բոլորս միասին վճռեցինք, վոր այդպես չի կարելի ապրել, վոր պետք է միջնապատով բաժանել սենյակը: Կազմեցինք պլան, թե ինչ և հարկավոր անել դրա համար. յես խորհուրդ տվի, թե ուր պետք է դիմել...

Պատգամավորի աշխատանքի ընթացքում շատ հաճախ այսպիսի բաներ են պատահում—ոգնում ես մարդուն, նա արդեն իսկ մոտենում է քեզ, գալիս է մոտդ խորհուրդ առնելու մինչև իսկ անձնական գործերի վերաբերյալ: Ոգնում ես մի մարդու, մյուս որը քեզ մոտ են գալիս ուրիշները: Ահագին բավականու-

թյուն ես ստանում, կուզես ել ավելին անել: Այդ, թվում է, թե փոքր գործ ե: Սակայն կյանքում ամեն ինչ կարևոր ե: «Մանր» գործերի վրա յես սովորեցի մեծ հացեր լուծել:

Մեր գործարանի համար հիվանդ տեղ եր դարձել մեր կալումենակի բանվորական ավանը: Այնտեղ չկար ջրմուղ, բաղնիք, դպրոց, առևտրական ցանցը վատ եր աշխատում: Պատգամավորները խմբակն ուժ չունեի լուծելու այդ բոլոր հարցերը, և Մոսկվայի խորհրդի պլենումներից մեկում յես պահանջեցի, վոր վայի խորհրդի պլենումներից մեկում յես պահանջեցի, վորպեսզի Մոսկվայի խորհուրդը, առանձնապես ընկեր Բուլգանինը, զբաղվեն դրանցով: Յեվ իրոք, Մոսկվայի խորհուրդն զբաղվեց Կոլոմենակի բան. ավանով: Կառուցվեց դպրոց, յերեք նոր խտնությունների բան. ավանով: Կառուցվեց դպրոց, յերեք նոր խտնություններ, լայն սպառման կրպակներ, նավթի կրպակ: Կա ջրմուղ և նութ, լայն սպառման կրպակներ, նավթի կրպակ: Կա ջրմուղ և բաղնիք: Ճիշտ ե, այդ բոլորն այսօրվա համար թվում է դեռևս բաղնիք: Ճիշտ ե, այդ բոլորն այսօրվա համար թվում է դեռևս ջրա քիչ, վորովհետև բան. ավանի բնակչությունը 13000 մարդուց անել—հասել է 23000-ի: Նոր պահանջներ առաջացան: Հարկավոր է տրամվայի դիմ անցկացնել, լավացնել, ընդլայնել ակումբի աշխատանքը: Յեվ անհա դարձյալ խնդիր ե զբաղված պատգամավորների առաջ—հասնել բանվորների համար կարևոր այս հարցերի լուծմանը:

* *

Ստալինյան մեծ Սահմանադրությունն ընտրողներին առաջադրում է նոր, շատ կարևոր պահանջներ: Փոթորիկաց յետում է մեր կյանքը: Յերբորդ հնգամյակում բազմաթիվ բարդ հարցեր են կանգնելու մեր առջև: Տնտեսական շինարարության, կուլտուրայի, յերկրի պաշտպանության ամբողջական հարցերը: Այժմ Խորհուրդների պատգամավորները կրելու յեն մեծ պատասխանատվությունն ընտրողների առաջ: Մենք պետք է թույլ չտանք, վոր իշխանության որդանները մտնեն թույլ մարդիկ, այնպիսիները, վորոնք անընդունակ են պայքարելու հանուն կոմունիզմի, մենք պետք է թույլ չտանք ժողովրդի թշնամիներին մտնելու Խորհուրդների մեջ: Թույլ տալ, վոր թշնամին մտնի պետական ղեկավարման մեջ, այդ նշանակում է ջլատել մեր օրհիկի հայրենիքի հզորությունը:

Յերիտասարդութեան առաջ հսկայական խնդիր է դրված: Չէ վոր առաջինը մենք պետք է ընտրենք ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը — սոցիալիստական մեր պետութեան իշխանութեան բարձրագույն օրգանը: Յերիտասարդութեանը պետք է նախապատրաստված ձևով գնա ընտրութեաննեքին:

Մենք պարտավոր ենք իմանալ Ստալինյան Սահմանադրութեանը, դարձյալ ու ելի պետք է ուսումնասիրենք այն:

Մենք դեռ պետք է լավ աշխատենք, լավ սովորենք, վորպէսզի յուրաքանչյուր աշխատավոր կարողանա ասել. «Սա հիանալի յերիտասարդութեան է, սա արժանավոր փոխարինող է: Յեռ վստահ տալիս եմ իմ ձայնը նրան. պետութեան կառավարումը կարելի յի վստահել նրան»:

Ն. Ի. ԿՎՈՐԵՅԿԻՅ—Մոսկվայի Ստալինի անվան ավտոգործարանի (նախկին ԱՄՈ) ստախանովական:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Խորհրդային Միութեան ժողովուրդները շուտով ընտրելու յեն ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորներ: Խորհելով այս մասին, հիշում եմ, թե ինչպէս յես առաջին անգամ Խորհուրդների ընտրութեան մասնակցեցի:

Այդ Մոսկվայի քաղաքային խորհրդի և Մոսկվա քաղաքի շրջանային խորհուրդների 1931 թվի ընտրութեաննեքն էյին: Այդ ժամանակ իմ 18 տարին նոր եր լրանում, Հիշում եմ, ինչպէս ուրախութեամբ գիտակցում էյի, վոր յես արդեն լիիրավ քաղաքացի յեմ և հին բանվորների հետ հավասար իրավունք ունեմ Խորհուրդների ընտրելու: Յեխերում կախել էյին Խորհուրդների թեկնածուների ցուցակ, դրանց մեջ կար և իմ ազգանունը: Ինձ հանձնարարում էյին վորպէս Մոսկվայի խորհրդի անդամ: Յեխերում, հերթափոխերում, խմբերում չկար մի ժողով, վորտեղ չխոսվեր ընտրութեաննեքի մասին: Բանվորները թեկնածութեաննեքն էյին քննարկում, խոսում էյին և իմ մասին:

Վերջապէս յեկավ ընտրութեաննեքի հանդիսավոր օրը: Հուզմունքի և հպարտութեան դագմունքը համակեց ինձ, յերբ յես ընտրական ժողով գնացի, առանձնապէս այն ժամանակ, յերբ սկսեցին քննարկել իմ թեկնածութեանը:

Ինձ ընտրեցին Մոսկվայի խորհրդի պատգամավոր: Յես աշխատեցի վորպէս փողոցների և կամուրջների սեկցիայի նախա-

գահ: Խորհրդի աշխատանքն ինձ շատ եր դուր գալիս, յես նրանում աճում եյի: Անհնկատելի անցան յերեք տարիները: Ավարտվեց պատգամավորական լիազորութեան իմ ժամանակը, բայց յես վճռեցի, վոր յեթե ինձ նորից չընտրեն, միևնույն ե, կմնամ և կաշխատեմ, վորպես Մոսկվայի խորհրդի ակտիվ:

Նորից են կախվել ցեխերում Խորհուրդների թեկնածուները ցուցակները, դրանց շուրջն են հավաքվում բանվորները, վիճում են իրար մեջ թեկնածութունների շուրջը: Բոլորի տրամադրութունը բարձր ե, ընտրութուններին պատրաստվում են, ճիշտ ինչպես տոնի:

Յե՛վ ահա նորից ընտրութուններ: Գործարանը յերկու ժամով շուտ դադարեցրեց աշխատանքը: Հանձնաժողովը վերջին անգամ դուրս հանեց ցեխերի արկղներից ընտրողներին՝ պատգամավորների նակազի համար կազմած առաջարկութունները: Յերեք հազարից ավելի առաջարկութուն եր յեղել:

Բանվորները յերկար շարաններով ժողովի եյին դնում: Մի՛ ծաղ, կատակներ, ուրախութիւն, ինչպես տոնական որերին ե լինում: № 10 խմբում, վորտեղ յես եյի, Մոսկվայի խորհրդի և շրջանային խորհրդի աշխատանքների մասին ղեկուցում եր գործարանի ղերեկտորը: Յես մտածում եյի, ահա, թե ինչ տվեց պրոլետարական հեղափոխութունը: Մի այլ յերկրում, վորեւ տեղ բանվորները կարող են արդյոք հավաքվել այսպիսի աղատութեան և ուրախութեան պայմաններում՝ քննադատելու իշխանութեան որդանների աշխատանքը, տալու նրանց նակազներ: Այդ հնարավոր ե միայն Խորհրդային յերկրում:

Ընտրութուններից առաջ հայտարարվում ե ներկա յեղողների թիվը: Ներկա յեն հարյուր սոկոսով: Քվեարկվում ե ընկ. ժուկովի թեկնածութունը: Բանվորները լավ չեն ճանաչում նրան: Ժուկովին չեն ընտրում: Բայց ահա ձուլարանի վարպետ ընկեր Շկոդի համար բարձրանում ե ձեռների մի ամբողջ անտառ: Բոլորը նրան ճանաչում են վորպես մի մարդու, վոր նվիրված ե բանվորական գործին: Այդպես խիստ են մոտենում բոլոր թեկնածուներին:

Մանդատային հանձնաժողովը հաշվում ե ձայները: Հիտ

ընդունվում ե մի բանաձև խորհրդի անցյալ աշխատանքների մասին: Ապա շրջանային ընտրական կոմիտեյի լիազորը կարդում ե բանվորներին՝ պատգամավորներին ուղղված նակազները:

Լրացումներ, փոփոխութուններ, ուղղումներ են արվում:

* *

Այսպես եյին ընտրում Խորհուրդները հին Մահմանադրութեան համաձայն: Աշխարհի ամենազեմոկրատական ընտրութունն եր այդ: Բայց կուսակցութունը մեղ ավելի առաջ ե տանում: Սոցիալիստական պետութեան ընտրական սիստեմը փոփոխութեան յենթարկվեց՝ ընտրութուններին ընթացքում ել ավելի լիակատար ղեմոկրատիա մտցնելու ուղղութեամբ: Մեր ղեմոկրատիան հասավ բարձրագույն աստիճանի:

Սոցիալիստական պետութեան մեջ իշխանութունը պատկանում ե ամբողջ ժողովրդին: Այլևս չկան «ձայնազուրկներ», բացի նրանցից, վորոնք հասարակութեան հանդեպ գործած հանցագործութեան հետևանքով զրկված են ընտրական իրավունքից՝ դատարանի վճռով և նրանցից, վորոնք որենքի սահմանած կարգով ճանաչված են խեղազար: ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացի, վոր լրացրել ե 18 տարին—առանց վորեւ սահմանափակման, անկախ սեւից, ծագումից, անցյալ զբաղմունքից և, ի հարկե, նաև անկախ ազգութունից—ունի իրավունք աշխատավորների պատգամավորների Խորհուրդներ ընտրելու և ընտրվելու: Իսկական ընդհանուր ընտրական իրավունք ձեռք ե բերված և նվաճված ե միայն մեր յերկրում, վորտեղ շահագործող դասակարգերը վոչնչացված են: Մեր պատգամավորը պատասխանատու յե ընտրողների առաջ: Նրան կարելի յե հետ կանչել Խորհրդից: Նրանից շատ բան ե պահանջվում: Առաջին հերթին, պատգամավորը պետք ե իմանա բնակչութեան պահանջները և այդ պահանջները մտցնի Խորհուրդ: Յուրաքանչյուր պատգամավորի խնդիրն ե—լինել միշտ աչալուրջ, հիշել, վոր դասակարգային թշնամին ղեռևս մինչև վերջ ջախջախված չե և փորձ ե անում մնասել մեղ: Պատգամավորը պետք ե արմատաճան անի բյուրոկրատիզմն ու քաջքուկը պետական ապարատի բոլոր ողակներից: Ժողովրդի կողմից ընտրվածը վճ-

ուում ե սոցիալիստական շինարարութեան հարցը, աշխատանքի ե կենցաղային կարևորագույն հարցերը: Այդ հարցերը նա պետք ե վճռի համաձայն աշխատավորների շահերի, համաձայն կոմունիզմի հաղթութեան շահերի: ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ե իշխանութեան այլ որգանները մեր յուրաքանչյուր թեկնածութեան նկատմամբ պետք ե ունենալ շատ խիստ մոտեցում:

Մեր հայրենիքի լավագույն մարդկանց ենք մենք ընտրում պատգամավոր ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի, վորպեսզի ամրանա ե ընդլայնվի բանվոր դասակարգի դիկտատուրան, վորպեսզի ավելի ամուր լինի բանվորների ե գյուղացիների դաշինքը, վորպեսզի մինչև վերջն արմատախիլ անենք ժողովրդի թշնամիների դեռես չջարդված մնացուկները, արագ կերպով վերացնենք նրանց կեղտոտ քնասարարութեան հետքերը ե արագորեն առաջ շարժվենք դեպի կոմունիզմ:

Իմ պատգամավորի միջոցով պետք ե լսելի լինի իմ ձայնը իշխանութեան որգաններին ե, յես գիտեմ, կառավարութեանը կունկընդդի նրան, քանի վոր կառավարութեանը գոյութուն ունի ժողովրդի կամքով ե ծառայում ե ժողովրդին:

Ո՞ւմ եմ ընտրում յես ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի համար: Յես միայն փորձված մարդկանց եմ ընտրում, միայն այնպիսիներին, վորոնց լավ եմ ճանաչում յես, վորոնց խոսքը կապված ե գործին, վորոնք սերտորեն կապված են ինձ հետ, բանվորների հետ ե հայրենիքի, կոմունիստական կուսակցութեան, մեր մեծ ուսուցիչ ընկեր Ստալինի նկատմամբ ունեն միևնույն սերը: Միայն այդպիսին կարող ե լինել իմ պատգամավորը:

Ուրեմն հւում եմ ձայն տալու յես:

Ընտրում եմ գործարանի հին կադրերին, վորոնց մեր ամբողջ կոլեկտիվը ճանաչում ե, հին պատգամավորներին, վորոնք Խորհուրդներում կատարած իրենց աշխատանքով արդարացրել են ընտրող-բանվորների վստահութեանը, լավագույն ստալինականներին: Յես գիտեմ, վոր մեր մեջ կան այնպիսիները, վորոնք արժանի յեն առաջ քաշվելու իբրև պատգամավոր ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի:

Արդյունաբերութեան բանվորների, գյուղատնտեսութեան, խորհատնեսութեանների, կոլտնտեսութեանների մեջ, մեքենատրակտորային կայաններում, խորհրդային ե գիտական հիմնարկներում կան շատ մարդիկ, վորոնք աշխատանքի մեջ են աճել ե վորոնց պետք ե առաջ քաշել պետական կառավարման:

Ընտրութեանների գործը շատ լուրջ գործ ե: Պետք ե ջանադիր կերպով պատրաստվել դիմավորելու այն: Յեթե առաջ պատգամավորների ընտրութեանները կատարվում եյին բաց քվեարկութեամբ ե ցուցակներով, այժմ ընտրութեանը կատարվում ե գաղտնի ե առանձին թեկնածութեանների շուրջը, թեկնածուներ, վորոնք առաջ են քաշվել ընտրական ոկրուգների կողմից:

Յեթե առաջ խորհրդային իշխանութեան միջին ե բարձրագույն որգանների ընտրութեանները բազմաստիճան եյին, ապա այժմ ամբողջ Խորհուրդների ընտրութեանները գյուղականներից ու քաղաքայիններից սկսած ընդհուպ մինչև ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը, լինելու յեն ամիջական, ուղիղ ճանապարհով: Չպետք ե մոռանալ այս բոլորը:

Իանվոր դասակարգի կողմից մերկացված ժողովրդի թշնամիներին, արոցկիստական-բուխարինականների, ճապոնա-գերմանական Ֆաշիստական լրտեսների անարգ դավաճանութեանը մի անկան Ֆաշիստական լրտեսների անարգ դավաճանութեանը մի անգամ ել ցույց տվեց, վոր տասնապատիկ անգամ պետք ե բարձրանա մեր զգոնութեանը: Թշնամին ցածհողի յե ե խորամանկ, նրան մի ա՞գամից ճանաչել չես կարող: Յեթե սխալվեցիր, չքընհեցիր—նա կփորձի սողալ Խորհուրդների ներսը: Մենք պետք ե շատ զգոն լինենք, վորպեսզի իր ժամանակին ճանաչենք թշնամուն, բաց անենք նրան, արմատից արմատախիլ անենք:

Ընտրական մեր որենքը բանվոր երին, ծառայողներին, կոլտնտեսականներին, կարմիրբանակայիններին իրավունք ե տալու ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի թեկնածուներ առաջ քաշել Միայն մեր ձեռնարկութեանների բանվորներին չե, վոր կարող ենք առաջ քաշել իբրև պատգամավորի թեկնածուներ՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի: Կան մարդիկ, վորոնց ճանաչում ե սիրում ե մեր ամբողջ յերկիրը: Մենք յերջանիկ կլինենք ԽՍՀՄ Գերա-

գույն Սորհրդի պատգամավորութեան թեկնածու առաջ քաշել նրանց, վորոնք սիրելի յեն յուրաքանչյուր բանվորի համար, խորհրդային յուրաքանչյուր քաղաքացու համար—մեր կուսակցութեան և Սորհրդային իշխանութեան ղեկավարներին, վորոնց անո նները մեզանից յուրաքանչյուրի շրթներէ վրա յեն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

62

ՅԱՇԻՆ Ս. Ի.—Մենք—յերկրի տերերը 3

ՏՐՈՒՍՈՎ Ն. Գ.—Առաջ և այժմ 8

ԻՈՆՈՎ Լ. Ի.—Նվաճածն ու ձեռք բերածը վոչ վոքի հետ չենք տա 12

ՅԱՐԻԳԻՆԱ Մ. Ի.—Ավելի շատ կին դեպի պետութեան ղեկավարումը 17

ՊՈՂԱԳՈՒՏԻՆ Ս. Վ.—Բանվորների հետ դաշնակցած 22

ԱԿԱԴ. ՏԵՐՊԻԳՈՐԵՎ Ա. Մ.—Գիտնականներն ուսմ կուղարկեն Սորհուրդները 29

ԱԿԱԴ. ՍԱՄՈՅԼՈՎԻՉ Ա. Ն.—Մենք ուսմ կընտրենք Սորհուրդների համար 35

Քեթե արդյունաբերութեան՝ Մոլոտովի անվան Ակադեմիայի ուսանողներ՝ ՎԻՆՈԳՐՍՈՎ Ա. Ի., ՖՈՄԻՆԱ Մ. Ն., ԻԼԼԱՐԻՈՆՈՎ Ա. ՅԵ. Գ.—Ընտրութուններին բողբոխի կարգ ու դիպիպլինա ունենալու համար . 41

ԴԵՄԻՏՈՎ Ֆ. Ա.—Յես յերիտասարդ եմ, յես հպարտ եմ 47

ԵՊՊ ՄԱՐԻԱ.—Առաջ քաշեցեք յերիտասարդութեանը պետութեան կառավարմանը 52

ԳԱՎՐԻԼՈՎԱ Կ. Գ.—Պատգամավորը 58

ԴՎՈՐԵՅԿԻՅ Ն. Ի.—Բարձրագույն աստիճանը 65



Քարգանդեցիներ՝ Ա. Տ. Մկրտչյան, Լ. Աբովյան և Վ. Ջրեկչյան:
Խմբագիր՝ Տ. Ալեքսանյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Խաչատրյան
Սրբագրիչ՝ Խ. Այվազյան
Գլավ՝ Լիտի լիագոր պ—4222
Հրատ. № 4355, պատվեր № 918, արժած 20.000
Հանձնվել է արտադրության 1937 թ. նոյեմբերի 21-ին
Ստորագրված է տպագրության 1937 թ. նոյեմբերի 28-ին

Գեներալի 2-րդ ապարան, Յերևան, Նալբանդյան, 11

ՀՀ Ազգային գրադարան



NL0202141

ՀԻՆԸ ԾՕ ԿՈՉ.

**КОГО МЫ ВЫБЕРЕМ
В ВЕРХОВНЫЙ СОВЕТ СССР**

**Сборник статей рабочих-стахановцев,
знатных колхозников и работников науки**

Госиздат, Ереван, 1937